Azg
7 ՄԱՅԻՍ 2004 ՈՒՐԲԱԹ 83 (3006)

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները կհանդիպեն Աստանայում

ԲԱԿՈՒ, 6 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՈՊԱՆ. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների հերթական հանդիպումը կկայանա սեպտեմբերին Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում ԱՊՀ երկրների գագաթաժողովի ավարտից հետո: Հանդիպմանը, որ կազմակերպում են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, կքննարկվեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղիները: Ինչպես Ադրբեջանի հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարել է ՄԽ ռուս համանախագահ Յուրի Մերզլյակովը, համանախագահները կողմերին բանակցությունների շարունակման կոչ են անում:

Բաքվի «525» թերթի համաձայն, այն հարցին, թե արդյոք համանախագահները առաջիկա հանդիպմանը նոր գաղափարներ եւ առաջարկներ կներկայացնեն, ռուս դիվանագետը նշել է բանակցային գործընթացի գաղտնիության պահպանման փոխադարձ պայմանավորվածությունը:

«Բոլոր երկրների կառավարությունները պետք է հասուն լինեն ու ճանաչեն Հայոց ցեղասպանությունը»

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայոց ցեղասպանության հարցին նվիրված բազում քննարկումներից Համաշխարհային հայկական կոնգրեսի երեկ հրավիրած «Ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում» թեմայով գիտաժողովը առանձնացավ ոչ միայն տարբեր երկրներից ժամանած մասնագետների ներկայությամբ, այլեւ հարցի իրավական լուծման երկարամյա 2004-2006 թթ. ծրագրային փաթեթի գոյությամբ: ԳԱ ակադեմիայի նիստերի դահլիճում լսվեցին «Ցեղասպանության ճանաչման ուղիներն ու միջոցները որպես հայ-թուրքական հարաբերությունների գործոն: Համաշխարհային հայկական կոնգրեսի խնդիրները» (զեկուցող՝ ՀՀԿ նախագահ Արա Աբրահամյան) եւ «Ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում» (զեկուցող՝ Յուրի Բարսեղով) զեկուցումները, որոնց շուրջ ծավալված քննարկման ժամանակ մասնագետներից յուրաքանչյուրն իր տեսակետն արտահայտեց՝ շեշտը դնելով հասկապես առանցքային հարցերի վրա:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համահայկական ծրագիրը ներառում է իրավական ու կազմակերպական բովանդակության մի շարք կետեր, որոնցից հատկապես մեկի վրա սեւեռվեց մասնակիցների ուշադրությունը: Խոսքը ցեղասպանության իրականացման տարեթվի վերաբերյալ եղած տարակարծության մասին է. մասնագետներից ոմանք պնդում են ընդունելի համարել հայերի բնաջնջման 2 ժամանակահատված՝ առաջինը 1876-1914 թթ., երկրորդը՝ 1915-1923 թթ., ոմանք էլ 1915 թվականը համարում են հաստատուն ու բացառիկ՝ հիմք ընդունելով աշխարհում այդ տարեթվի հայտնի լինելու կարեւոր փաստը:

Տես էջ 2

ԵՐԵՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքական կոնսուլտացիանե՞ր, թե՞ քաղաքական երկխոսություն

«Ընդդիմությունը երբեք անակնկալի չի եկել, ընդդիմությունը կարող է պատրաստել անակնկալներ»

ԼԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երեկ Ազգային ժողովում կայացավ, ԱԺ կանոնակարգի 18-րդ հոդվածի համաձայն, Արթուր Բաղդասարյանի հրավիրած քաղաքական կոնսուլտացիան: 5 ժամ տեւած քննարկումների ընթացքում մշակվել եւ լրատվամիջոցներին է ներկայացվել ԱԺ խումբ-խմբակցությունների քաղաքական կոնսուլտացիաները շարունակելու հայտարարություն: Կոնսուլտացիաների օրակարգը ծեւավորվելու է միասնաբար: Դեռ վերջնական չծեւավորված օրակարգում արդեն ներառված է բոլոր կողմերի առաջարկություններն ամփոփող 30 հարց:

Ու քանի որ դեռ ֆորմատը որոշակիացնելու խնդիր կա, այսինքն՝ դեռ որոշված չէ՝ տեղի ունեցածը քաղաքական կոնսուլտացիա է, թե՞ քաղաքական երկխոսություն, առայժմ օրակարգում ներառված հարցերի մասին մանրամասն տեղեկություններ չեն հաղորդվի: Նման պայմանավորվածություն է ձեռք բերվել կոնսուլտացիաների մասնակիցների միջեւ: Վիկտոր Դալլաքյանի հավաստմամբ, վստահության հանրաքվեի հետ կապված քննարկվելու քաղաքական կոնսուլտացիաների ընթացքում, իսկ «օրակարգում ներառված է վստահության հանրաքվեի հարցի այնպիսի ձեւակերպում, որը միանգամայն բավարարում է ընդդիմությանը»:

Առայժմ հայտարարությունից հայտնի է, որ կոնսուլտացիայի ընթացքում կարեւորվել է երկրում նոր քաղաքական իրավիճակի ստեղծման անհրաժեշտությունը, ինչի հիմքը պետք է կազմեն կոալիցիայի հայտարարությունները եւ «Արդարության» ու «Ազգային միաբանության» մայիսի 4-ի համատեղ հայտարարությունը: Նոր քաղաքական իրավիճակ ասվածն, ըստ Վիկտոր Դալլաքյանի, «պայմանավորված է ԵԽԽՎ Հայաստանին տրված խիստ գնահատականներով եւ նույն վեհաժողովի կողմից արձանագրված հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Դրսեւորվելու է քաղաքական կամք, որ հանրաքեսությունում ստեղծվի նոր իրավիճակ, որի համար կարող է հիմք հանդիսանալ քաղաքական կոնսուլտացիայում ներառված հարցերի լուծումը»: Շավարշ Քոչարյանն ու Վիկտոր Դալլաքյանը փաստեցին, որ կալանվածներին ազատ արձակելու պայմանավորվածություն է ձեռք բերվել: Դալլաքյանի հավաստմամբ, օրակարգում ընդդիմության համար անակնկալներ չեն եղել:

Ի դեպ, կոնսուլտացիաներին ընդդիմադիր երկու խմբակցությունների առաջին դեմքերը չէին մասնակցում, ինչը Քոչարյանը բացատրեց նրանց լիազորված ներկայացուցիչների մասնակցությամբ: Քոչարյանն ընդգծեց, որ ձեռք է բերվել քաղաքական կոնսուլտացիաների շարունակման համաձայնություն, «ինչը դեռ բանակցություն չէ, իսկ ընդդիմադիր ասվածն են ոչ թե այս կոնսուլտացիաների, այլ այն բանակցությունների հետ, որոնք մենք ունենալու ենք իշխանությունների հետ»: Շավարշ Քոչարյանը մատնանշելով ընդդիմության հայտարարությունը՝ շեշտեց, որ իրենք պատրաստ են քննարկել «այն, ինչը երկրում առաջացրել է այս վիճակը»:

Գիշերվա ընթացքում պիտի հստակեցվեին օրակարգի հարցերը, եւ այսօր արդեն ԱԺ մամուլի եւ հասարակության հետ կապերի բաժնի կողմից ներկայացվեն լրատվամիջոցներին:

Կենսատու երակ Արցախի ու Հայաստանի համար

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը գումարեց 13-րդ նիստը

ԳԱԲՐԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Արդեն 12 տարվա կենսագրությամբ հիմնադրամն արել եւ շարունակում է անել առավելագույնը Հայաստանի եւ Արցախի համար կենսական նշանակության ծրագրերին կյանք տալու համար: Նրա 3 տասնյակ մասնակիցներից բաղկացած հոգաբարձուների խորհուրդը ներկայացնում է սփյուռքի, Հայաստանի եւ Արցախի եկեղեցական ու բարեսիրական կառույցները, ճանաչված անձերի ու բարերարների:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 13-րդ նիստն սկսվեց տերունական աղոթքով, որից հետո հիմնադրամի գործադիր տնօրեն Նաիրա Մելքումյանը ներկայացրեց գործադիր վարչության հաշվետվությունը:

Միայն անցած տարվա ընթացքում հիմնադրամն արդեն ավարտել է 13 ծրագիր, ընթացքի մեջ են եւս 19 ծրագիր՝ 10 մլն դոլար արժեքով: Անցած տարի նվիրատվություններն աճել են 1,2 մլն դոլարով, եւ հիմնադրամի մուտքերը կազմել են 5 մլն 469 հազար դոլար:

Արդեն այս տարեվերջին 50 տոկոսով կավարտվի Արցախի անվտանգության համար ռազմավարական անգնահատելի նշանակությամբ «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու կառուցումը: 169 կմ երկարությամբ ճանապարհի 44 կմ-ն արդեն պատրաստ է՝ 44-ն ընթացքի մեջ է: 2003 թ. կատարվել են նաեւ կրթական, առողջապահական, բնակելի շենքերի շինարարության հետ կապված ծրագրեր: Նյու Յորքի հայկական համայնքն ստանձնել է Ստեփանակերտի համաբուժարանի ֆինանսավորումը (1,5 մլն դոլար): Այն հագեցած կլինի նորագույն սարքավորումներով, կունենա ախտորոշման նոր բաժանմունք (300 հազար ԱՄՆ դոլար արժեքի):

Տես էջ 2

ՎՈՒՈՒԱՄ-ը կհնի ԼՂ հարցը

ԲԱԿՈՒ, 6 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի ԱԳ նախարարությունը «Ուչ նոխտա» թերթին հայտնել է, որ վաղը Թբիլիսիում կհանդիպեն ՎՈՒՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Ադրբեջան, Մոլդովա) անդամ երկրների ԱԳ նախարարները, որին պետք է մասնակցի նաեւ Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովը: Քննարկվելու են Հարավային Կովկասի իրադրությունը, Վրաստանում ստեղծված ճգնաժամն ու ղարաբաղյան կարգավորման ուղիները:

ՎՐԱՍՏԱՆ

Աբաշիձե գերդաստանի մայրամուտը

Սաակաշվիլին «վարդյա» հեղափոխությունը ներմուծեց Աջարիա

ԹԱԳՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Վրաստանի 36-ամյա նախագահ Միխայիլ Սաակաշվիլին երեկ Աջարիայի խորհրդարանից հազարավոր մարդկանց ուղեկցությամբ ուղեւորվել է Սեւ ծովի ափ, լվացել ձեռքերն ու դեմքը եւ լրագրողներին խոստովանել. «Իսկապես ես երջանիկ եմ»:

18-րդ դարից սկսած Աջարիան ժամանակի հզոր կայսրությունների՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ եղել է կռվախնձոր՝ անցնելով ձեռքից-ձեռք: Ավելի քան 200 տարի, անկախ նրանից, թե քանի կայսրություններից որքան է մաս կազմել Աջարիան, այնտեղ անփոփոխ իշխել է մահմեդականություն ընդունած Աբաշիձե գերդաստանը: Ասլան Աբաշիձեով վերջ տրվեց Վրաստանում նշանավոր այս գերդաստանի իշխանությանը:

Մայիսի 6-ից Աջարիայի «ցարը» («սուլթանը») Սաակաշվիլին է: Գիշերը Բաթում ժամանեց Ռուսաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Իգոր Իվանովը եւ իր հետ Մոսկվա տեղափոխեց Ասլան Իբրահիմովիչին, վերջինիս ընտանիքի անդամներին: Բաթումում կրկնվեց այն, ինչը տեղի էր ունեցել Թբիլիսիում 2003 թ. նոյեմբերի 22-ի գիշերը. հաջորդաբար, ժողովրդի ճնշման տակ, առանց արյան եւ կրակոցների քաղաքական ասպարեզը սիրողաբար լքեցին էդուարդ Շեւարդնաձեն եւ Ասլան Աբաշիձեն:

Երկու դեպքում էլ միջնորդի դեր ստանձնեց Կրեմլի էմիսար, մոր կողմից վրացի Իգոր Իվանովը: Եթե Թբիլիսիի «վարդյա» հեղափոխության օրերին, ինչպես վերջերս «Ազգին» տված հարցազրույցում ասաց Սաակաշվիլին, Իվանովը Վրաստան էր եկել փրկելու Շեւարդնաձեին, ապա մայիսի 6-ին նա Բաթում ժամանեց Սաակաշվիլու առաջարկությամբ՝ փրկելու Աբաշիձեին եւ որ ամենակարեւորն է՝ կանխելու վրաց-աջարական եղբայրասպան պատերազմը:

ՈՂ անվտանգության խորհուրդը հաղորդում է, որ Աբաշիձեն հեռացավ Վրաստանից եւ ուղեւորվեց Ռուսաստան՝ կանխելով արյունահեղությունը, ինչը կարող էր բազում զոհերի պատճառ դառնալ: Ըստ անվտանգության խորհրդի, երբ տեղի էին ունենում քննարկումներ Իվանովի եւ Աբաշիձեի միջեւ, Բաթումի փողոցներում փոխհրաձգություն է սկսվել, Աջարիայի «Առյուծը» որոշել է հեռանալ Վրաստանից:

Տես էջ 8

ԸՆԹԱՑԻԿ

Սկիզբը էջ 1

Յուրի Բարսեղովի զեկուցման մեջ դա բացատրվեց հետեւյալ կերպ. «1915 թվականի կաղաքաղը մարդկանց գիտակցության մեջ դրվեց քաղաքական նոպատակով, որպեսզի ցեղասպանությունն արդարացվի պատերազմական իրադրությամբ, իսկ կատարվածի պատասխանատվությունը բարդվի Օսմանյան կայսրության եւ ոչ թուրքական պետության ուսերին: Նման պարզաբանումներ արվել են Ֆրանսիայում եւ Եվրախորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչման ժամանակ»: Իսկ Ռիչարդ Հովհաննիսյանը նկատեց, որ քաղաքական առումով 1915 թվականն արդեն ճանաչված է եւ նոր սահմանումներով կարելի է վնասել ցեղասպանության ճանաչմանը: Նույն կարծիքը արտահայտեցին Գերմանիայից ժամանած Գուս Վոլֆգանգը, Պողոս Զեֆիյանը եւ Աբոս Ոսկանյանը՝ նշելով, որ 1915 թվականին նախորդող եւ հաջորդող իրադարձությունները ինքնին վկայում են Թուրքիայի ծրագրված գործունեության մասին, եւ այդ ամբողջական շղթայի մեջ պետք չէ կորցնել 1915 թվականի բացառիկությունը: Իբրեւ օրինակ նշվեց հրեական հոլոքոսթն իբրեւ բացառիկ երեւույթ ընդունելու եւ մեկ տարբերով նշելու Իսրայելի որոշումը: Պ. Զեֆիյանը հիշեցրեց, որ Թուրքիայի ներկայիս կառավարությունը դեռեւս իրականացնում է մշակութային ցեղասպանություն, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ առաջարկվող տարբերի սահմանումն էլ ավելի կբարդացնի իրավիճակն ու կստեղծի նոր դժվարություններ: Առաջարկվեց հարցն առանձին քննարկել, որպեսզի բոլոր մասնագետները հնարավորություն ունենան հիմնավորելու իրենց տեսակետները:

Արա Աբրահամյանն իր խոսքում կարեւորեց Հայոց ցեղասպանության մասին համահայկական դիրքորոշում ստեղծելու, քարոզչական լայնածավալ աշխատանք կատարելու, ազգային անվտանգության շահերից ելնելու եւ սփյուռքի հետ ամուր համագործակցություն հաստատելու անհրաժեշտությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը Կոնգրեսն ամենից առաջ դիտարկում է որպես ժողովուրդների միջեւ բարիդրացիական հարաբերությունների հաստատման կարեւոր նախադրյալի, որը պիտի հաստատի Թուրքիայի պատասխանատվությունը կատարած ոճրագործության բոլոր կործանիչ հետեւանքների համար՝ ընդհուպ մարդկային ու նյութական վնասների փոխհատուցումը: Դրան հասնելու միակ ուղին դիտվում է միջազգային իրավունքի հիման վրա հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությունը, որի համար պահանջվում է խնդրով զբաղվող պետական ու հասարակական գործիչների համագործակցությունը: (Ա. Աբրահամյանի զեկույցի ամբողջական տեքստը՝ էջ 4):

«Բոլոր երկրների կառավարությունները պետք է հասուն լինեն ու ճանաչեն Հայոց ցեղասպանությունը»

Աստերի փոխանակության ընթացքում հնչեցին նաեւ այլ մտահոգություններ, մասնավորապես հավանության արժանացավ թուրքագետ Ռուբեն Սաֆրասյանի առաջարկը Թուրքիայում կատարվող վերջին փոփոխություններին հետեւելու, հայկական հարցը փակուղի մտցնելու թուրքերի ջանքերի դեմն առնելու նպատակով մոնիտորինգի խումբ ստեղծելու մասին:

Գիտաժողովին մասնակցելու է եկել նաեւ Երուսաղեմի հոլոքոսթի եւ ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, ցեղասպանության հանրագիտարանի գլխավոր խմբագիր, հրեական համալսարանի պրոֆեսոր Իսրայել Չառնին, որի հետ զրուցեցի գիտաժողովի ընդմիջմանը: Հարցիս, թե ի՞նչ է մտածում քննարկվող հարցերի մասին, նա պատասխանեց. «Որ հայերի ցեղասպանություն է տեղի ունեցել նաեւ19-րդ դարի վերջին, որեւէ կասկած չի հարուցում: Բազմաթիվ մասնագետների դիտարկումով, երբ սպանվում է ժողովրդի մի զանգվածը, անգամ 1000 մարդ, եւ ոչ 100 հազար կամ միլիոն, արդեն իսկ ազգի բնաջնջում է համարվում՝ ողջ բովանդակությամբ ու իմաստով: Այդուհանդերձ, մարդկային ուղեղը բավականին թույլ է, եւ կան մարդիկ, որոնք առաջարկում են ոչ այնքան խոշոր երեւույթներն անվանել ջարդ, մասնակի ցեղասպանություն:

Միայն վերջերս կարողացանք աշխարհին ապացուցել 1915 թվականին եւ դրանից հետո տեղի ունեցած հայերի ահավոր ցեղասպանության ճշմարտությունը: Մենք պայքարում ենք հասարակական կարծիք ստեղծելու համար: Կարծում եմ, որ այսօր կարիք չկա խնդիրը բարդացնելու, ավելի ճիշտ է ընդունել, որ Հայոց մեծ ցեղասպանությունից առաջ եղել են հայերի կոտորածներ»:

«Իսրայելի կառավարության դիրքորոշումը դեռ երկա՞ր կմնա «ժխտողական» հարցիս ի պատասխան ասաց. «Երկար տարիներ ամոթ ու խայտառակություն եմ համարում, որպես հրեա ու իսրայելցի ես ամաչում եմ դրա համար ու սաստիկ զայրանում: Սակայն Իսրայելում ստեղծված հասարակական կարծիքը ինձ վստահեցնում է, որ մենք հաղթել ենք, որ իսրայելցիները ծանոթ են Հայոց ցեղասպանության հարցին, նրանց համար դա զգայուն թեմա է: Բազմաթիվ նյութեր են տպվում թերթերում, հեռուստահաղորդումներ են ցուցադրվում: Համոզված եմ, որ բոլոր երկրների կառավարությունները պետք է հասուն լինեն եւ ճանաչեն Հայոց ցեղասպանությունը: Աշխարհում ավելի վեհ բաներ կան, պետք չէ վախենալ դիվանագիտական հարաբերություններ փչացնելուց: Կան բարոյական ու հոգեւոր սահմաններ: Հրեաները չպետք է ցեղասպանություն ապրած մեկ այլ ժողովրդի հարցն անտեսեն, դա ամոթալի երեւույթ է: Մենք ամեն կերպ կպայքարենք դրա դեմ»:

Ռեզերվները շատ ավելի մեծ են

«Թվերի, ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ հիմնադրամի աշխատանքները նորմալ են ընթանում: Ծրագրերի բազմազանության առումով եւս գոհունակություն պիտի հայտնեմ, բայց, անշուշտ, ռեզերվները շատ ավելի մեծ են», «Հայաստան» հիմնադրամի անցած տարվա գործունեությունն այսպես գնահատեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Նա տեղեկացրեց նաեւ, որ նիստի ընթացքում քննարկվել է նոր տեխնոլոգիաների կիրառման եւ դրանում դրսի ու ներսի բարերարների եւ ժողովրդի մասնակցության ծավալների ընդլայնման հարցը: «Կարծում եմ, բավարարվածության, հպարտության զգացում բոլորն են ապրում, կցանկանայի, որ դրա հետ մեկ այլ զգացում եւս լիներ, միգուցե կարելի էր շատ ավելին անել, որն, անշուշտ, կմղեր շատ ավելի ակտիվ աշխատանքի հաջորդ տարում», ավարտեց նախագահը:

Մի փոքր հոգնություն, մի փոքր հետաքրքրության պակաս կա

«Մի փոքր հոգնություն, մի փոքր հետաքրքրության պակաս կա նվիրատվությունների, հանգանակությունների, գումարների հավաքման ներկա փուլում», այսպիսի խնդիր է արձանագրում ՌԱԿ կենտրոնական վարչության համաստեղծ Երվանդ Ազատյանը: «Չգիտեմ, թե ինչն է պատճառը, հիմնադրամը Հայաստանի եւ սփյուռքի միջեւ արյան կամրջի նման մի բան է, եւ եթե սփյուռքը պիտի կենսունակություն հաղորդի Հայաստանին այս դժվար ժամանակներում, ապա նվիրաբերումները շատ ավելի ակտիվ պիտի լինեն: Մեր եկեղեցիները հսկայական եկամուտներ ունեն, բայց հաճախ տեսնում ենք, որ դրանց մի մասը պերճանքի համար շռայլորեն ծախսում է, ասենք, տաճարները բարեգարդելու համար, երբ գիտենք, որ Արցախում ճանապարհը դեռ կառուցված չէ, եւ մարդն այստեղ դեռ էշով է ճամփորդում: Հատկապես Ամերիկայի մասին է խոսքս», պարզաբանեց նա իր մտահոգությունը: Նրա համոզմամբ, անկասկած վերաբերմունքի պատճառներից մեկն այն է, որ հիմնադրամն իր հանգանակություններով ակամա սահմանափակում է բազում կազմակերպությունների, օրինակ, եկեղեցիների եկամուտները, եւ տաճարները իրենց մրցակցի են ընկալում ու շատ էլ բարի աչքով չեն նայում:

Բոլոր հայ ընտանիքներից՝ փոքր գումարների հավաքումով

Ամերիկայի հայկական համագումարի ներկայացուցիչ, «Հայաստան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Հրայր Հովնանյանը, իր ասելով, երբեք հարցազրույց չի տալիս լրագրողներին, բայց այս անգամ բացառություն արեց: Բավարարվածություն արտահայտելով հիմնադրամի աշխատանքների վերաբերյալ, նա, այնուամենայնիվ, մտահոգություն հայտնեց գումարների հավաքման կարգի մասին: «Սկզբնապես այլ սկզբունք պիտի կիրառվեր՝ բոլոր հայ ընտանիքները փոքր գումարներ պիտի վճարեին, հիմա կարծես շեղվել ենք այդ գաղափարից: Հիմա միայն մեծահարուստներն են վճարում: Բարեգործական, եկեղեցական բոլոր կազմակերպությունները նույն աղբյուրին են վճարում եւ ճանճռանում են, դժվար է»: Ասվածը մասնավորեցնելով Նյու Յորքի օրինակով, Հրայր Հովնանյանն, այնուամենայնիվ, իրողությունը պատճառաբանեց ավելի շատ իրենց կազմակերպչական «ծուլությամբ», քան հոգեբանական կամ նյութական խոչընդոտներով:

Ռ. Մ.

Կրկին սոցիալական քարտերի դեմ

Երեկ «Հայ-արիական միաբանությունը» եւ «Ընդդեմ մարդկանց համարակալման» միավորումը հայտարարություն են տարածել, որում մեկ անգամ եւս անհանգստություն են հայտնում հանրապետության տարբեր հիմնարկներում աշխատակիցներին սոցիալական քարտ սանալու պարտադրանքների վերաբերյալ: «Այսօրվա իշխանությունները դեռ պատասխան են տալու սերունդների առաջ: Սեփական երկրի իշխանությունների կողմից անասունի տեղ դրվող յուրաքանչյուր մարդ ինքն էլ իրավունք ունի անասունի պես վարվելու տվյալ իշխանավորի հետ: Սա լինելու է նաեւ մեր քարոզը, ու այնժամ դուք եւ մյուսները (բոլոր լողները) չհամարձակվեք մեղադրել մեզ», գրված է «Հայ-արիական միաբանության» հայտարարության մեջ: Երկու կազմակերպություններն էլ գրում են, որ դեմ չեն «սոցիալական քարտ» գաղափարին, սակայն դա պետք է լինի միայն սոցիալական ոլորտի քարտ, նման առանձին քարտեր պետք է լինեն նաեւ այլ ոլորտների համար:

Ռ. Մ.

Սպանության փորձ

Մայիսի 5-ին ոստիկանության կենտրոնականի բաժնի աշխատակիցները սպանության փորձ կատարելու կասկածանքով բերման են ենթարկել 1978 թ. ծնված, նախկինում դատված Գեորգ Հ.-ին: Նա նույն օրը հիվանդանոցներից մեկի վիրաբուժական բաժանմունքի բժիշկների սենյակում փորձել է խեղդամահ անել նույն հիվանդանոցի բուժքույր Մարգարիտ Զ.-ին: Վերջինիս փրկել է օգնության հասած հերթապահ վիրաբույժներից մեկը: Գեորգ Հ.-ն ձերբակալված է, քննությունը վարում է դատախազությունը:

Մ. Մ.

ԱՄՆ դեսպանի եւ սփյուռքի ներկայացուցիչների այցը Երեւանի թիվ 172 դպրոց

Ինչպես տեղեկանում ենք Հայաստանում ԱՄՆ դեսպանության լրատվության բաժնից, ԱՄՆ դեսպանի հանդիպումները սփյուռքի ներկայացուցիչների հետ դարձել են ավանդական: Այս հանդիպումների ժամանակ դեսպանի հետ նույն սեղանի շուրջ են հավաքվում ամերիկահայ համայնքի գործընկերները, որի ընթացքում քննարկվում են ԱՄՆ-ի կողմից Հայաստանին ցուցաբերվող օգնությունը, հայ-ամերիկյան ընթացիկ հարաբերությունները եւ մասնավոր ու պետական ոլորտի համագործակցության հնարավորությունները զարգացման եւ մարդասիրական կարեւորագույն ծրագրերի ասպարեզում: Մայիսի 4-ին ԱՄՆ դեսպանի հետ կլոր սեղանի շուրջ այս տարվա քննարկումներին մասնակցող սփյուռքի 35 ներկայացուցիչները դեսպան Ջոն Օրդուեյի եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Ռոբին Ֆիլիպսի հետ այցելեցին Երեւանի թիվ 172 դպրոց: Այցի ընթացքում հյուրերին ներկայացվեցին ԱՄՆ կառավարության ֆինանսավորած «Պատանեկան նվաճումներ» եւ «Փրոջեքթ հարմոնի» կազմակերպությունների կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը, որոնք նոր հեռանկարներ են բարին մասնակցող ուսուցիչներն ու աշակերտները քննարկել են անհատի քաղաքացիական իրավունքն ու պարտականությունները ժողովրդավար հասարակությունում: Իսկ «Փրոջեքթ հարմոնիի» օգնությամբ խումբը մասնակցել է օնլայն քննարկման, որին էլ արձագանքել են աշխարհի տարբեր ծայրերից հայ ուսանողներ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 79 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Գալուստյանի 47
Թող. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարվածք
«Ազգ» թերթի
Թերթի նյութերի ամբողջական կամ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ, առանց խմբագրության գրավոր հաճախության, խստիվ արգելվում են, հակառակ դեպքում՝ հեղինակային իրավունքի մասին օրենքի:
Նյութերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Կենսատու երակ Արցախի ու Հայաստանի համար

Սկիզբը էջ 1

Ստեփանակերտի տեսողության խանգարումներով երեխաների դպրոցում ներդրվել է հայ գիտնականների հեղինակած համակարգչային հատուկ ծրագիր, որը կույր երեխաներին հնարավորություն է տալիս ընթերցել համակարգչի օգնությամբ: Նախիջեւանի Մելքումյանը կարեւորեց Հայաստանի եւ ԼՂՀ-ի միջեւ տարածքային զարգացման համատեղ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը: Դրանցից մի քանիսի նախագծերը գործադիր վարչությունը երեկ ներկայացրեց նիստի քննարկմանը: Այս առթիվ ծրագրային առաջարկներ են ներկայացրել նաեւ Նյու Յորքի եւ Ֆրանսիայի տեղական կառույցները:

Հիմնադրամի գործադիր վարչությունն անընդմեջ փորձում է ընդլայնել համագործակցության շրջանակները: Հիմնադրամի աշխատողները վերջերս հանդիպումներ են ունեցել Եվրոպական հանձնաժողովի պատգամավորների հետ՝ Բրյուսելում եւ Փարիզում: Արդեն իսկ ստացվում են համագործակցության հեռանկարային առաջարկներ: Բացի ավանդական բարեգործական կազմակերպություններից, հիմնադրամին օգնելու ցանկություն են հայտնում նաեւ նորաստեղծ կազմակերպություններ ու հիմնադրամներ: Անցած նիստից հետո ընկած ժամանակաշրջանում զգալի մեծացել է նաեւ հիմնադրամի տեղական կառույցների ցանկը: Այս պահին տեղական մասնաճյուղ է ստեղծվում նաեւ Մոսկվայում, որի կազմում կընդգրկվեն ռուսահայ համայնքի ամենաազդեցիկ ներկայացուցիչները: Տեղական կառույցներն ավելանում են նաեւ Եվրոպայում եւ ԱՄՆ-ում:

Զեկույցի ավարտին հիմնադրամի գործադիր տնօրենն անդրադարձավ դոլարի փոխարժեքի նվազման, շինանյութերի թանկացման մասնավոր խնդիրներին, որոնք ծրագրերի նախագծման ընթացքում նկատի չէին առնվել եւ այժմ խանգարում են աշխատանքների նորմալ ընթացքին:

Ա. Ա.

Հարցազրույց

Ոսկերչությունը թռիչքաձեւ զարգացել է

Հավաստիացրեց ոսկեգործների եւ աղամանդագործների ասոցիացիայի նախագահը

Երեւանում երեկ բացվեց «Ոսկեգործություն-2004» 7-րդ միջազգային ցուցահանդեսը, որտեղ բացի հայկական ընկերություններից, ներկայացված էին նաեւ իսալական, սիրիական, ռուսական, ուզբեկական, արաբական ոսկերչական ձեռնարկությունների արտադրանքը: Մատանիներ, ադամանդներ, ժամացույցներ, ոսկերչական այլ զարդեր ու հուշանվերներ, ինչպես նաեւ ամենատի փոքրից, թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերից պատրաստած իրեր, դիզայն, մոդելավորում եւ այլն: Այս ամենը առաջարկում էին ոչ միայն ավելի քան 30 ձեռնարկությունները, այլեւ անհատ ոսկերիչներն ու դիզայներները: Միջոցառման բացման ժամանակ ելույթ ունենալով, Հայաստանի ոսկեգործների եւ աղամանդագործների ասոցիացիայի նախագահ Էմիլ Գրիգորյանը նշեց, որ ցուցահանդեսի մասնակիցների աճխարհագրությունը վկայում է աճխարհում նրա ճանաչված լինելու մասին: Իսկ ոլորտի թռիչքաձեւ զարգացումը նա պայմանավորեց Հայաստանի իշխանությունների վարած նպաստավոր քաղաքականությամբ:

Ցուցահանդեսի բացմանը մասնակցեց եւ ներկայացված արտադրանքին ծանոթացավ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որից հետո պատասխանեց լրագրողների հարցերին: Նա ակնհայտ համարեց այս ոլորտի առաջխաղացումը եւ կարեւորեց նման ցուցահանդեսների կարեւորությունը նոր տեխնոլոգիաների, նոր ոճի ձեռքբերման եւ յուրացման համար: Ներկայումս կարեւորվում են նոր տուկաներ գրավելը եւ արտադրության ծավալները ընդլայնելը: Նախագահի հավաստմամբ, այս բնագավառի զարգացմանը խանգարող ոլորտ հանդես չեն գալիս մասնավորապես խնդիրները հանել: Ճեւավորվում է ավելի մեծ ոլորտ, որտեղ ոսկերչությունը, ակնագործությունը եւ կիսաթանկարժեք քարերի մշակումը փոխկապակցվում են: Որպես մեր տնտեսության առավել զարգացած ոլորտներ, բացի ակնագործությունից եւ ոսկերչությունից, Ռոբերտ Քոչարյանը հիշատակեց բարձր տեխնոլոգիաները, լեռնահանքային արդյունաբերությունը, ծառայությունները, հույս հայտնեց, որ քիմիական արդյունաբերությունը կսկսի զարգանալ, մասնավորապես կսկսեն աշխատել «Նաիրիտն» ու Վանաձորի քիմիամալը:

Ա. Ս.

Նախագահը ընդդիմությանը խորհուրդ է տալիս ներգրավվել մշակութային կյանքում

Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի Հայաստանին վերաբերող զեկույցի մասին իր կարծիքը հայտնելով, երեկ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ասաց, որ բովանդակային առումով մեծ խնդիրներ չի տեսնում: Նկարագրային մասում, նրա կարծիքով, կան լուրջ անճշտություններ կազմված իրադարձությունների փաստագրության հետ: Այս առնչությամբ Հայաստանի իշխանությունները մի քանի օրում կներկայացնեն իրենց պատասխանը, իսկ ընդհանրապես զեկույցի մասին գրավոր կարծիքը կներկայացվի հունիսին: «Մենք եւս ունենք կարծիք այդ կազմակերպության մեջ եւ այն պատրաստելու մտադրություն: Պետք չէ Եվրախորհուրդը դիտել որպես մի պոլիտբյուրո, որտեղ որոշում էին կայացնում եւ պարտադրում: Դա մի կազմակերպություն է, որի անդամը նաեւ մենք ենք», նշեց նախագահը: Իսկ իրավիճակը սրելու ընդդիմության փորձերը նա համարեց անպատասխանատվություն, քանի որ դա հարվածում է մեր բոլորի գրպանին: Ռոբերտ Քոչարյանը խորհուրդ տվեց «չարությամբ համակված այդ մարդկանց» ավելի ակտիվ ներգրավվել Երեւանի մշակութային կյանքում, որպեսզի ազատվեն այդ չարությունից: Դա, ըստ նախագահի, ավելի շատ օգտակար կլինի նախեւառաջ նրանց համար:

Ա. Ս.

Բնակարան կարող է ձեռք բերել ոչ միայն հարուստ խավը

Հայաստանում հիպոթեկային վարկավորման համակարգը պետք է ստեղծվի մինչեւ տարեվերջ

Կադաստրային համակարգի բարեփոխումների իրականացման Հայաստանի փորձին եւ անշարժ գույքի շուկայի զարգացմանն անհրաժեշտ հիպոթեկային վարկավորմանն էր նվիրված երեկ «Արմենիա» հյուրանոցում ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի աճխատանքային խմբի երկօրյա հավաքը: Միջոցառմանը ողջույնի խոսք էր հղել Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, իսկ մասնակիցների թվում էին ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Համաշխարհային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների, անշարժ գույքի առք ու վաճառքով զբաղվող գործակալությունների, բանկերի, այլ մասնավոր կառույցների ներկայացուցիչներ: Երեկվա քննարկումները ծավալվեցին «Հայաստանի կադաստրի համակարգի փորձը» եւ «Անշարժ գույքի շուկան Հայաստանում» թեմաների շուրջ: Այսօր կքննարկվեն հիպոթեկային վարկավորման առաջարկները: Աճխատանքային հավաքի նպատակների եւ գործնական նշանակության մասին տեղեկություններ ստանալու նպատակով դիմեցինք անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահ Մանուկ Վարդանյանին.

- Չնայած կադաստրի համակարգի բարեփոխման մեր ունեցած հաջողություններին, որից տպավորված էին նաեւ միջոցառմանը մասնակից օտարերկրյա գործընկերները, լուծման կարիք ունեցող մի քանի խնդիրներ կան, կապված վարչարարության հետ: Այս քննարկման արդյունքում հիմնավորեցինք, որ միասնական կադաստրի վարումը ճիշտ է: Ուսումնասիրել ենք եվրոպական երկրների փորձը եւ, տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով, ներդրել Հայաստանում: Կարծում եմ, որ առաջիկա տարիներին այս փորձը շատ երկրներ կընդօրինակեն, որովհետեւ արդարացված է եւ տնտեսապես, եւ քաղաքացիների սպասարկման տեսանկյունից: Կադաստրի միասնական համակարգի շնորհիվ մեկ օրվա ընթացքում ստեղծում ենք հողի եւ շինությունների տեղեկատվական համակարգ, գրանցում ենք գույքային բոլոր իրավունքները (սեփականության, օգտագործման եւ այլն), ծառայություններ ենք մատուցում ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում: Փաստորեն իրավական, ֆինանսական եւ ֆիզիկական կադաստրների վարման հիմքում մեկ կադաստրային քարտեզ է դրվում:

Ինչ մնում է հիպոթեկային վարկավորմանը... Բոլորս գիտենք, թե ինչպիսի տեղաշարժ կա անշարժ գույքի շուկայում: Իմիջիայլոց, այս միջոցառման շրջանակներում քննարկվելու է Հայաստանի անշարժ գույքի շուկայի իրավիճակը 1998-2003 թթ., որտեղ այդ շարժը հստակ կերեւա: Եթե համեմատենք, որ 1998 թ.-ին գրանցվել է 14 հազար գործարք, իսկ 2003 թ.-ին՝ շուրջ 74 հազար: Տարբերությունն ակնհայտ է: Դրան նպաստող մի քանի պատճառներ կան: Բացի սոցիալ-քաղաքական կայուն իրավիճակից, դրանք ներդրումային ծրագրերն են, հստակ օրենսդրական դաշտը, առաջին պետական գրանցման աճխատանքների իրականացում եւ այլն: Սակայն անշարժ գույքի շուկան Հայաստանում հավասարապես զարգացած եւ բաշխված չէ: Եթե մայրաքաղաքի կենտրոնում շուկան բավականին ակտիվ է, ապա ծայրամասերում թույլ է: Նույնը կարելի է ասել Երեւանի եւ աղեցի գոտու, սահմանամերձ բնակավայրերի հարաբերակցության մասին: Եթե հարուստ խավը կարողանում է անշարժ գույք ձեռք բերել, ապա մյուս խավերի համար դա շատ դժվար է: Հիպոթեկային վարկավորումը շատ կարեւոր է վերջիններիս համար: Դա նշանակում է, որ եթե մարդն ունի ծրագիր, բայց չունի ֆինանսական միջոցներ, պետք է կարողանա ձեռք բերել բնակարան եւ հողամաս: Այստեղ կարեւորը ոչ միայն ֆինանսական խնդիրներն են, այլեւ կադաստրի դերը: Հարկ է, որ ունենանք թափանցիկ կադաստրային համակարգ, որին զուգահեռ ստեղծվեն ադահովագրության, մասնավոր գնահատման ինստիտուտները: Նախագահի հանձնարարականով մինչ տարեվերջ պետք է ստեղծենք բոլոր անհրաժեշտ ինստիտուտները՝ հիպոթեկային վարկավորման համակարգն իրականություն դարձնելու համար:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Իշխանությունը երկխոսության է հրավիրում, ընդդիմությունը ոչ մի առաջընթաց չի արձանագրում

«Քաղաքական լարված իրավիճակի ելքը երկու խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովներ ստեղծելն է, որոնցում հավասարապես ներգրավված կլինեն կոալիցիայի եւ ընդդիմության ներկայացուցիչները եւ կքննարկեն խնդիրներն ու լուծման ուղիները», երեկ Քաղաքացիական ազգային նախաձեռնության կազմակերպած քննարկման ժամանակ ասաց Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի փորձագետ Հովսեփ Խուրշուդյանը: «Ներքաղաքական դիմակայությունը Հայաստանում. պատճառներ եւ հանգուցալուծման ուղիներ» թեմայով քննարկման ժամանակ խնդիրները, որոնք առկա են երկրում, եւ որոնց լուծման ուղղությամբ երկու թեւերը պետք է համագործակցեն: Նախ նա նշեց ընտրությունների ընթացքում տեղի ունեցած օրինախախտումների եւ դրանք իրականացնողներին պատժի ենթարկելու անհրաժեշտության մասին: «Կոալիցիայի ներկայացուցիչները մեկ անգամ չէ, որ հանդես են եկել որպես խոսքի ազատության, ազատ մամուլի ջատագով, սակայն Ա1+-ը եթերից զրկված է մնում այն դեպքում, երբ եթերի իրավունք ունեցող մեկ այլ հեռուստաընկերություն, խախտելով մրցույթի բոլոր պայմանները, ամբողջ օրը ավտոմեքենաների գովազդ է հեռարձակում», ասաց նա: Բանախոսը նաեւ հիշեցրեց Սերժ Սարգսյանի հայտարարությունը, ըստ որի սուտ են ընդդիմության այն մեղադրանքները, թե երեւան մտնող ճանապարհները ոստիկանները փակել են: «Ընդդիմությունը եւ կոալիցիան պետք է համատեղ ուժերով պարզեն, թե ով է հրաման տալիս ոստիկանությանը՝ փակել ճանապարհները», առաջարկեց Հ. Խուրշուդյանը: Առաջարկությունների վերջին կետը վերաբերում էր ընդդիմության եւ իշխանության համատեղ աշխատանքի անհրաժեշտությանը՝ Գյումրիում եւ Երեւանում հանրահավաքների ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները պարզելու գործում:

Պրն Խուրշուդյանի ելույթից հետո ծայնի իրավունք խնդրեց Ալբերտ Բազեյանը եւ ասաց, որ քննարկման գալու ճանապարհին իրեն զանգահարել են եւ ասել, որ Չարենցավանի ոստիկանության շրջակայքում բազմություն է հավաքվել, ապօրինի ձերբակալություններ են իրականացվել վերջին հանրահավաքի մասնակիցների նկատմամբ: «Ծրագրված է զգրախոսության, ոստիկանության աշխատակիցներին դիմակայելու համար մարդկանց բերել Երեւան, այստեղ դաստ, կալանքի ենթարկել կամ տուգանել: Մի մասին արդեն ձերբակալել են, մյուսների տներն են խուզարկում, հայտարարեց նա: Մենք այստեղ քննարկումներ ենք ծավալում, իսկ այնտեղ ապօրինություններ են տեղի ունենում»:

Քննարկմանը ներկա Գալուստ Սահակյանը լրագրողների հետ զրույցի ժամանակ պրն Բազեյանի հայտարարության մասին ասաց. «Դրա հետ կապված մենք բազմիցս կրկնել ենք, որ խնդիրները կամ լուծվում են պետության կառույցների միջոցով, որոնք իրենց լիազորություններն ունեն, կամ ավելի նորմալ ձեւը, երբ պետության մեջ լարվածություն կա, դա պետք է որոշի քաղաքական դաշտը: Դա է պատճառը, որ մենք բազմիցս ընդդիմությանը եւ քաղաքական բոլոր ուժերին առաջարկել ենք մշակել օրակարգ եւ քննարկել բոլոր այդ խնդիրները, հետեւություններ անել, ապա միասնաբար հանդես գալ: Մեզ անընդհատ վերջնագրերով են մոտենում, առաջարկում բոլոր կալանավորներին ազատ արձակել՝ չմտածելով, որ իշխանությունն իր լիազոր մարմիններն ունի, եւ անբնական կլինի, որ վերջիններս գնան քաղաքական այս կամ այն ուժի ճանապարհով»: Հանրապետական կուսակցության ներկայացուցիչը ցույցերի ժամանակ ձերբակալվածներին քաղբանտարկյալ անվանելը ծիծաղելի է համարում: «Այդ արտահայտությունը մարդկանց չի հետաքրքրում, ընդամենը վարկաբեկում է խարհով մեկ բղավել, որ քաղաքական բանտարկյալներ ունենք, նշանակում է անտեղի հետաքրքրել այդ մարդկանց», ասաց Գալուստ Սահակյանը:

Ինչ վերաբերում է հանրահավաքների ժամանակ երեւան մտնող ճանապարհները փակելուն, Ալբերտ Բազեյանը ասաց, որ իրենք ինչ-որ պահի արդեն պետք է կարողանան բացել դրանք, «դիմադրել ոստիկանության սանձարձակություններին, իսկ հանրապետության քաղաքացիները պարտավոր են նաեւ դիմել ինքնապաշտպանության, եթե նրանց վրա ապօրինի հարձակումներ են գործում»: Նա համոզված է, որ ճանապարհները միտումնավոր են փակվում, այլապես իշխանությունը կհամոզվի, որ ՀՀ քաղաքացիների ճնշող մեծամասնությունը կողմ է նախագահի հրաժարականին:

«Նման քննարկումները փիլիսոփայական բնույթ են կրում, իսկ քաղաքական գործնական հանդիպումներն իրենց նշանակալից արդյունքը կունենան երկրի լարվածությունը թուլացնելու գործում, ասաց Գալուստ Սահակյանը: Այս օրերի ընթացքում մեր գործընկերներին՝ ընդդիմության ներկայացուցիչներին պետք է կրկին փորձենք հորդորել, որ պատրաստ ենք քննարկել յուրաքանչյուր հարց: Այսօր խնդիրը ոչ թե իշխանության փոփոխության, նախագահի հրաժարականին է վերաբերում, այլ երկրի ինքնիշխանությանը եւ հետագա ճակատագրին: Իսկ եթե բոլոր քաղաքական ուժերը միավորվեն, կարճ ժամանակահատվածում վտանգը կհաղթահարենք»:

Ալբերտ Բազեյանը իրենց հայտարարած 10-օրյա դադարը որակեց որպես բարի կամքի դրսեւորում՝ ասելով, որ ակնկալել են, թե ԵՎ հայտնի բանաձեւից հետո իշխանությունը կփորձի քայլեր ձեռնարկել՝ միջազգային այդ կառույցի առջեւ ստանձնած պարտավորությունները կատարելու համար, սակայն տեսնում են, որ որեւէ քայլ չի արվում, ապօրինություններն ու բռնությունները շարունակվում են, ոստիկանությունը դարձել է կատարյալ լկտի եւ սանձարձակ: Ըստ նրա՝ կոալիցիոն ուժերը մեր երկրում ոչինչ չեն որոշում, նրանք ընդամենը խամաճիկ են, քաղաքական շարք վարչախմբի համար, իսկ Հայաստանը դարձել է կատարյալ բռնապետություն, որտեղ իշխում են ուժային կառույցները: Իսկ

Գալուստ Սահակյանը ընդդիմության հայտարարած 10-օրյա դադարը երեխայական խաղ համարեց, ասաց, որ առաջարկում է դադարեցնել բոլոր գործողությունները, նստել երկխոսության, իսկ դա հնարավոր է 10 օր տեւի, հնարավոր է՝ 5 կամ 20:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔԱՍՅԱՆ

Կոպիտ վերաբերմունք լրագրողի նկատմամբ

«Ազգային միաբանության» գրասենյակում կուսակցության անդամ Կորյուն Առաքելյանը կոպիտ վերաբերմունք է ցուցաբերել «Փակագիծ» շաբաթաթերթի թղթակից Գագիկ Աբգարյանի նկատմամբ: Վերջինս, իր աշխատանքային գործունեության շրջանակներում, կուսակցության գրասենյակում փորձել է որոշ պարզաբանումներ ստանալ ներքաղաքական վերջին զարգացումների վերաբերյալ: Երբ Աբգարյանը ներկայացել է որպես «Փակագծի» թղթակից, Աժ պատգամավոր Կորյուն Առաքելյանը եւ գրասենյակում գտնվող մի քանի անձինք ոչ միայն մերժել են լրագրողին, այլեւ նրա հետ վիճաբանության մեջ մտել՝ իրենց թույլ տալով փողոցային մակարդակի արտահայտություններ:

«Փակագիծ» շաբաթաթերթի խմբագրակազմն անթույլատրելի է համարում իր մասնագիտական աշխատանքը կատարող լրագրողի նկատմամբ ցուցաբերված նման վերաբերմունքը եւ իր վրդովմունքն է արտահայտում «Ազգային միաբանություն» կուսակցությունում տիրող նման բարքերի կապակցությամբ:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Ցեղասպանության ճանաչման ուղիներն ու միջոցները որպես հայ-թուրքական հարաբերությունների գործոն

Համաշխարհային Հայկական Կոնգրեսի խնդիրները

Արա Աբրահամյանի զեկուցումը խորհրդաժողովում

Հարգարժան տիկնայք եւ պարոնայք, թույլ տվեք Համաշխարհային Հայկական Կոնգրեսի անունից շնորհակալություն հայտնել Ձեզ՝ կոնֆերանսի բոլոր մասնակիցներին, որ սիրահոժար համաձայնվեցիք մեզ հետ քննարկել ցեղասպանության ընդունմանը եւ ճանաչմանը միտված ուղիներն ու միջոցները, որպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նախադրյալներ:

Այս խնդիրների վերաբերյալ իմ ունեցած մոտեցումների մասին ես բազմիցս խոսել եմ ունեցածս ելույթներում, մամուլում տպագրված հոդվածներում: Խնդրո առարկայի վերաբերյալ իմ մոտեցումները առավել հանգամանորեն են շարադրված «Հայոց ցեղասպանության փաստի հաստատումը համաշխարհային հանրության պարտքն է» խորագրով հարցազրույցում, որն անցած ամսվա վերջերին տպագրվել է **«Ազգ»** օրաթերթում:

Ուստի այսօր կցանկանայի հակիրճ կերպով կոնֆերանսի մասնակիցների ներկայացնել մի շարք մտքեր, եզրահանգումներ հիմնահարցի վերաբերյալ:

Համաշխարհային Հայկական կոնգրեսի ստեղծման գլխավոր նպատակներից եւ, հետեւաբար կարեւորագույն խնդիրներից մեկն է հասնել հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության, մարդկության դեմ իրականացված այս զարհուրելի հանցագործության փաստի՝ միջազգային հանրության կողմից լիարժեք եւ վերջնական ճանաչմանը: Սա նախատեսում է նաեւ հենց իր՝ Թուրքիայի կողմից ցեղասպանության պատմական փաստի ճանաչում եւ այս հարցի հետ կապված բոլոր խնդիրների խաղաղ կարգավորում՝ հենվելով միջազգային իրավունքի օբյեկտիվ հենքի վրա: Այս խնդիրը բավականաչափ դժվարին ու բարդ է:

Թուրքական ղեկավարները չեն ընդունում ցեղասպանության փաստը, որովհետեւ բաց գիտակցում են այդ ոճրագործության միջազգային իրավական հետեւանքները: Գիտեն նաեւ, թե ինչպես է միջազգային հանրությունը ժամանակին ըմբռնել ու գնահատել թուրքական պետության քաղաքական պատասխանատվության հետեւանքները: Առավել ամբողջական տեսքով այն արտահայտվեց Սեւրի բազմակողմ հաշտության պայմանագրում, որը, սակայն, հայտնի պատճառներով, այդպես էլ մնաց թղթի վրա:

Կատարած ոճրագործության համար միջազգային-իրավական պատասխանատվության հարցն առաջվա պես սպիտում է Թուրքիային համառորեն դիմադրել հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանության փաստի ընդունմանը: Նրա կողմից Ցեղասպանության հերքման ուղղությամբ տարվող պաշտոնական քարոզարշավի էսկալացիան անհերքելի փաստ է դարձել: Թուրքիան այդ նպատակի իրագործման համար չի խնայում ֆինանսական միջոցներ, այդ գործում ակտիվորեն օգտվում է վարձու պրոֆեսիոնալ լոբբիստական կազմակերպությունների ծառայություններից: Թուրքիան խոչընդոտում է Հայկական հարցի իրավական եւ արդարացի լուծմանը՝ հենվելով որոշ հզոր պետությունների քաղաքական աջակցության վրա:

Ցավալի փաստ է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Արեւմուտքի մի շարք տերություններ դեռեւս չեն հրաժարվել երկակի չափանիշներից: Չնայած աշխարհում տեղի ունեցող արմատական փոփոխություններին՝ ԱՄՆ-ն Թուրքիային դեռեւս համարում է իր հիմնական ռազմական գործընկերներից մեկը: Եվ պատահական չէ, որ Թուրքիայում հայերի նկատմամբ կատարված զարհուրելի հանցագործության փաստի ճանաչման խնդիրը Ամերիկայի Միացյալ Նահանգներում դիտվում է միայն որպես ներքաղաքական պայքարի հարց: Երկրի վարչակազմը համառորեն խուսափում է «ցեղասպանություն» բառից, ճանգի դրա դեմ առարկում է իր ռազմական գործընկեր Թուրքիան:

Շրջանառվող այն տեսակետը, թե իբր ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության հարցի նկատմամբ հայերի համառությունը «չի համապատասխանում» Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների կարգավորման շահերին, հակասում է արդի միջազգային հարաբերությունների մասին ամենատարրական պատկերացումներին անգամ: Թուրքական կառավարությունը խրախուսում է այս տեսակետը՝ ցույց տալով իր անհաշտվողականությունը, ամրապնդում իր վճռականությունը՝ չճանաչելու հայոց ցեղասպանության փաստը:

Դիմելով հայոց ցեղասպանության մերժման նոր ձեւերին ու միջոցներին, թուրքական կառավարությունը ներկայումս սկսել է զուգադրել ապատեղեկատվությունը, փաստերի ժխտումը կամ խեղաթյուրումը ֆորմալ-իրավական փաստարկների հետ: Թուրքերը սկսել են հանդես գալ որպես միջազգային իրավունքի «կողմնակիցներ»:

Իսկ հայերին վերագրվում է այն, որ նրանք իբր ձգտում են «իրավունքը փոխարինել պատմությամբ»՝ չցանկանալով Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորել միջազգային իրավունքի շրջանակներում: Իրականում հակառակ իրավիճակն է:

Վերջին շրջանում աշխարհում առավել պարզորոշ է նկատվում Հայոց ցեղասպանության ճանաչման միտումը, որը սակայն բացառում է միջազգային-իրավական հետեւանքները՝ այն է կատարած հանցագործության համար Թուրքիայի պատասխանատվության ճանաչումն ու հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնումը:

Այս տեսակետը պնդելու գործում ավելի հեռուն գնալու անհաջող փորձ կատարեցին Նյու Յորքի անցումային ժամանակաշրջանի արդարության միջազգային Կենտրոնի կողմից հրավիրված իրավախորհրդատուները: Ի պատասխան Հայոց ցեղասպանության նկատմամբ ցեղասպանության ոճիրը կանխելու եւ պատժելու մասին միջազգային Համաձայնագրի կիրառելիության հարցի, նրանք նշեցին, որ այդ իրադարձությունները կարող են որակվել որպես ցեղասպանություն այն իմաստով, ինչ իմաստով այդ տերմինը կիրառվում է Համաձայնագրում: Սակայն, իրավախորհրդատուները Հայոց ցեղասպանությունը որակեցին որպես «պատմական փաստ», որը իբր չի ենթադրում համապատասխան միջազգային իրավական պատասխանատվություն: Իրենց կեղծ տեսակետը իրավախորհրդատուները փորձեցին հիմնավորել նրանով, որ միջազգային Համաձայնագիրը չունի հետադարձ ուժ այն իրադարձությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել մինչեւ դրա ուժի մեջ մտնելը, այսինքն՝ մինչեւ 1951 թվականի հունվարի 12-ը: Իրավաբանական այս կեղծ թեզը վկայում է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ իրավական գնահատման համար ծավալված պայքարը քաղաքականության ասպարեզից անցնում է միջազգային իրավունքի հարթություն:

Նման իրականությունը մեզ պարտավորեցնում է շարունակել այնպիսի փաստարկների մշակումը, որոնք ոչ միայն հաստատում են ցեղասպանության, որպես հանցագործության պատմականորեն կատարված փաստը, այլեւ առաջացնում են պատմական փաստի իրավական կողմը՝ միջազգային-իրավական բոլոր հետեւանքներով:

Այսօր ակնհայտորեն փորձեր են արվում նաեւ անտեսելու փաստաթղթերով հիմնավորված այն պատմական փաստը, որ դեռեւս այն ժամանակ, երբ մեր ժողովրդի դեմ գործվում էր այդ ոճիրը, միջազգային հանրությունը՝ ի դեմս Փարիզի խաղաղության կոնֆերանսի եւ Ազգերի լիգայի, ճանաչել է Հայոց ցեղասպանության փաստը եւ թուրքական պետության միջազգային-իրավական պատասխանատվությունը որպես այդ հանցագործությունը կատարած պետություն: Այն ժամանակ Թուրքիային հաջողվեց խուսափել պատասխանատվությունից:

Ներկա իրողության պայմաններում Համաշխարհային Հայկական կոնգրեսի խնդիրն է ամեն ինչ անել, որպեսզի միջազգային հանրությունը պատմական փաստերի հիման վրա անվերապահորեն հաստատի Հայոց ցեղասպանության փաստը: Այդ աշխատանքները պետք է տարվեն այն հաշվով, որպեսզի Թուրքիան եւս ընդունի իր կողմից կատարված ծանր հանցագործության փաստը եւ չկարողանա կրկին խուսափել պատասխանատվությունից: Նշված խնդիրների կատարման արդյունքում միայն կարող է հիմք ստեղծվել մարդկության դեմ իրագործված ամենադաժան հանցագործությանն առնչվող բոլոր հարցերը միջազգային իրավունքի օբյեկտիվ հիմքի վրա կարգավորելու համար:

Այսօր այդ խնդիրների լուծմանը, Հայոց ցեղասպանության կրկնակի ճանաչմանը կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե մենք ազգովին միավորենք մեր ջանքերը եւ գործենք միասնական համազգային հայեցակարգի հենքով: Հենց այս նպատակին է միտված գիտագործնական սույն կոնֆերանսը:

Ելնելով այն բանից, որ Փարիզի խաղաղության կոնֆերանսը եւ Ազգերի լիգան ոչ միայն ճանաչել են «մի ամբողջ ժողովրդի սպանության» փաստը, այլեւ հաստատել են այդ հանցագործության համար թուրքական կառավարության միջազգային պատասխանատվությունը, ճիշտ կլինեն այսօր խոսել արդեն ճանաչված պատասխանատվության իրագործման անհրաժեշտության մասին:

Այսպիսի մոտեցումը զգալիորեն կբեռնաթափի որդեգրած նպատակներին հասնելու գործընթացը, միաժամանակ էականորեն կնվազեցնի Թուրքիայի մանեւրելու հնարավորությունները:

Ներկա կոնֆերանսի աշխատանքների ընթացքում մենք հավաքաբար պետք է փորձենք գտնել հետեւյալ հարցերի պատասխանները.

-Ի՞նչ ենք հասկանում «ցեղասպանության ճանաչում» ասելով,

- Արդյո՞ք ուզում ենք հասնել միայն հոգեկան բավարարվածության, իրավունքի եւ արդարության գաղափարի վերացական հաղթանակի,

- Կբավարարի՞ արդյոք մեզ արտասահմանյան որոշ երկրների կողմից արդեն ընդունված Հայոց ցեղասպանության փաստի հաստատումը, թե՞ մեզ պետք է ի վերջո հասնել հենց Թուրքիայի խոստովանությանը՝ իր կատարած հանցագործության մասին,

- Ընդհանուր առմամբ մենք հայերի - հայ ժողովրդի ո՞ր իրավունքների վերականգնմանը պետք է ձգտենք:

Այլ կերպ ասած, մենք ինքներս պետք է ունենանք անցյալից մնացած բոլոր հարցերի կարգավորման միասնական, իրատեսական ծրագիր, հաշվի առնելով, իհարկե, Թուրքիայի եւ թուրք ժողովրդի հետ հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Անշուշտ, սա մեկ հանդիպման ենթակա չէ: Բայց հավատում եմ, որ կոնֆերանսը մեկնարկ կդառնա լուրջ, խոր, համալիր հետազոտական աշխատանքի համար, որը գիտնականներին թույլ կտա պարզություն մտցնել բոլոր հարցերում: Պատմական, փաստագրական եւ միջազգային-իրավական տեսակետներից հիմնավորապես սուզված նման համահայկական դիրքորոշումը մեզ անչափ անհրաժեշտ է հետագա քայլերի համար:

Հնարավո՞ր է այսօր ցեղասպանության ճանաչման հարցում հասնել փոխհամաձայնության: Իհարկե ոչ: Թուրքիայի կողմից այդ ծանր հանցագործության դատապարտումից եւ անկեղծ խոստովանությունից հետո միայն կարելի կլինի փնտրել եւ մշակել կոնկրետ ուղիները ցեղասպանության հետեւանքները վերացնելու ուղղությամբ՝ հիմնվելով հայ-թուրքական բոլոր տիպի հարաբերություններում քաղաքական-իրավական որոշումների համալիր փաթեթի վրա:

Իհարկե, համահայկական գործողությունների ծրագրի մշակումը դժվարին խնդիր է: Այն շոշափում է հարցերի մի ամբողջ համակարգ ինչպես ներհայկական կյանքի, այնպես էլ միջազգային հարաբերությունների ոլորտի՝ միջազգային-իրավական, քաղաքական, տնտեսական, ֆինանսական եւ այլ:

Համահայկական ծրագրի ստեղծումը ենթադրում է ցեղասպանության մի շարք հարցերի՝ պատմական, աշխարհագրական, վիճակագրական եւ այլ հիմնավորված տեսակետների մշակման անհրաժեշտությունը: Ինչպես, օրինակ, ցեղասպանության իրականացման ժամանակը եւ դրա պարբերացումը, ընդգրկման տարածքը՝ թուրքական պետության պետական սահմաններից դուրս ու ներս, բնակչության եւ ցեղասպանության զոհերի թվի դինամիկան (սպանվածներ, բռնագաղթածներ, մահացածներ, կրոնափոխվածներ եւ այլն): Պետք է հիշել, որ այս հարցերում անգամ ամենաանշանակ հակասությունը կամ անճշտությունը կարող է օգտագործվել մեր դեմ:

Նման կարեւորագույն հարցի շուրջ այդպիսի փորձված հակառակորդի հետ չի կարելի բանակցություններ վարել հանպատրաստից, ինչպիսի մակարդակում էլ դա լինի: Ամեն տեսակետ, ամեն մի մանրուք պետք է լինի կշռադատված, հանգամանորեն ուսումնասիրված, փաստարկված: Բանակցությունները պետք է հիմնված լինեն խնդրի կարգավորման մեկ միասնական հայեցակարգի վրա: Ուստի միմիայն համահայկական դիրքորոշման մշակումից հետո կարելի կլինի սկսել բանակցությունները թուրքական կողմի հետ:

Բանակցությունները, հավանաբար, կանցկացվեն փաթեթային սկզբունքով, ինչը, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, հետեւանք է փոխկապակցված մի շարք որոշումների ընդունումը, երբ մի հարցի շուրջ բերված զիջումները փոխհատուցվում են մյուսների շահերով: Նախապատվելի է քաղաքական-իրավական փաթեթի տարբերակը: Որպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համահայկական ծրագրի բաղադրիչ մաս, պետք է անպայման ներառել նաեւ այն, որ Թուրքիան հրաժարվի Լեռնային Ղարաբաղի խնդրի հարցում Ադրբեջանի որդեգրած ծայրահեղական դիրքին տրվող միակողմանի աջակցությունից: Եթե մեզանից պահանջում են ցեղասպանության հետեւանքով առաջացած էթնիկ իրականության հաշվառում, ապա, մենք առավել եւս, իրավունք ունենք ակնկալել հարգանք Ղարաբաղում հազարամյակներ շարունակ գոյություն ունեցող իրականության նկատմամբ:

Հայաստանը, ձեռք բերելով անկախություն եւ դառնալով ՄԱԿ-ի անդամ, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, ունի բոլոր հնարավորությունները իրավասու միջազգային կազմակերպություններում եւ հաստատություններում բարձրացնելու Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դրա իրագործման համար նրա պատասխանատվության հարցը:

Անկախացումից եւ ՄԱԿ-ին անդամակցելուց հետո, Հայաստանը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, հնարավորություն ստացավ պաշտպանելու պետության եւ հայ ժողովրդի օրինական իրավունքն ու կենսական շահերը:

Մենք չենք ուզում պարզեցնել հարցի էությունը: Մենք հասկանում ենք, որ արդի միջազգային պայմաններում ճիշտ եւ արդարացի գործին միշտ չէ, որ ինքնաբերաբար ուղեկցում է հաջողությունը:

Այդպիսին էր եւ աշխարհաքաղաքական իրադրությունը 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի ամբողջ ընթացքում, եւ այսօր էլ այն չի նպաստում իրավական ու արդարության հաղթանակին: Սակայն ճշմարիտ գործը պետք է համառորեն եւ հմտորեն պաշտպանել, եւ ոչ թե լռության մատնել: Այս են պահանջում ոչ միայն մեր հիշողությունը, այլեւ իրավունքի եւ արդարացիության մասին մեր ունեցած ամենատարրական պատկերացումները: Սա նաեւ գործնական քաղաքականության հրամայական պահանջն է:

Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ կատարված ցեղասպանության փաստի ճանաչման պահանջը, այդ հանցագործության համար նրան դատապարտելը չեն կարող դիտարկվել որպես Հայաստանի եւ հայ ժողովրդի հետ հարաբերությունների բարդացման գործոն: Ի վերջո, խոսքը մի ամբողջ ժողովրդի անվտանգության, հայկական պետության գոյության մասին է:

Ստեղծվել է անընդունելի մի այնպիսի իրավիճակ, երբ հարեւան ուժեղ պետությունը չընդունելով իր մեղքը 1.5 միլիոն անմեղ մարդկանց իրենց պատմական հայրենիքում ոչնչացնելու պատմական փաստի համար, այսօր էլ իր վրա է վերցրել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի գործառույթները՝ շրջափակման մեջ պահելով ՄԱԿ-ի անդամ անկախ պետությանը: Ստացվում է այնպես, որ նախկին դահիճը ոչ միայն անհրաժեշտ հետեւություններ չի արել իր խայտառակ անցյալից, այլեւ փորձում է շարունակել այդ քաղաքականությունը: Նման քաղաքականության դրեւորումներից է նաեւ այն իրողությունը, որ այսօր թուրքական բարձրագույն պաշտոնյաները իրենց թույլ են տալիս Հայաստանին սպառնալ «եւս մեկ դասով»: Ահա թե ինչու թուրքական հասարակայնության գիտակցության մեջ շարունակվում է արմատավորվել բշնամանք եւ ատելություն հայերի նկատմամբ:

Այս պայմաններում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի համառ հերքումը Հայաստանի համար դառնում է երկրի ռազմավարական հիմնահարց՝ ողբերգական անցյալի կրկնության հավանականությամբ:

Երբ խոսքը գնում է մեր ժողովրդի ապագայի մասին, որպես իրավիճակը սպասի գնահատող պրագմատիկներ, մենք եւս գտնում ենք, որ երկրի անվտանգության հարցը պետք է լինի համաշխարհային քաղաքականության օրակարգում եւ համաշխարհային հանրության ուշադրությունը սեւեռվի հնարավոր այն վտանգի վրա, ինչը ներառում է իր մեջ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտման հերքումը:

Հայ-թուրքական հարաբերությունների «բարդացման» առնչությամբ հնչող հողարկված սպառնալիքները լոկ հաստատում են տարածքային ծավալապաշտության եւ ցեղասպանության իրականացման նախկին քաղաքականության հնարավոր կրկնության երկյուղների հիմնավորվածությունը, ամրապնդում են մեր վճռականությունը՝ հասնելու Հայոց ցեղասպանության դատապարտմանը, որպես դրա կրկնության կանխման երաշխիքի:

Դիվանագիտական ասպարեզում թուրքական հարձակմանը դիմակայելու լուրջ հնարավորություններ ունեն նաեւ հայկական, հատկապես ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Հունաստանի եւ այլ երկրների համայնքները: Ներազդելով իրենց բնակված երկրների արտաքին քաղաքականության վրա՝ նրանք կարող են հասնել այդ երկրների կառավարությունների կողմից արդարացի քաղաքական գործողության իրականացմանը:

Կցանկանայի հատկապես ընդգծել, որ ժամանակակից իրավիճակներում առաջին պլան է մղվում հայ ժողովրդի միջազգային-իրավական պայքարի աղահովումը՝ հանուն իրավունքի եւ արդարության հաղթանակի:

Տես էջ 5

Արտերկիր

Այսօր առանձնահատուկ կարեւորություն է ներկայացնում ափխարհի շատ երկրներում հեղինակավոր հայամետ լոբբիի առկայությունը եւ կարելի է ակնկալել նրա ազդեցությունը Հայաստանի եւ հայերի ճակատագրի հետ կապված կենսական որոշումների ընդունման գործընթացում:

Այսօր ճիշտ կլինի կատարելագործել մեր մոտեցումները ցեղասպանության հետեւանքների վերացման պայքարի գործընթացում, լայնորեն օգտագործելով ժամանակակից միջազգային-իրավական, տեղեկատվական, քաղաքական եւ կազմակերպական հնարավորությունները: Այս հարցում շատ բան կախված է մեր ժողովրդի կազմակերպվածությունից, նրա պատրաստվածության մակարդակից եւ հիմնահարցին լիարժեք տիրապետելուց, ազգի կենսական խնդիրների շուրջը համախմբվելու կարողությունից:

Հայոց ցեղասպանության հետեւանքների վերացման հիմնահարցը առաջնային կարեւորության համազգային խնդիրների շարքում է, իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է փնտրել եւ գործողության մեջ դնել Հայաստանի եւ Սփյուռքի համատեղ գործունեության համար համապատասխան ծրագրեր եւ մեխանիզմներ:

Այսօր, համահայկական խնդիրների լուծման գործում առաջնահերթ կարեւորություն է տանում միասնական գործողությունների մշակման անհրաժեշտության գիտակցումը՝ ներառելով եւ ցեղասպանության պրոբլեմը:

Մեր դառը փորձը հուշում է, որ չի կարելի լուծել ցեղասպանության հիմնահարցը, Հայկական հարցն ամբողջությամբ մեկ կուսակցության, մեկ համայնքի կամ միայն Հայաստանի Հանրապետության ուժերով:

Այսօր գերիշխող է դառնում այն բանի գիտակցումը, որ միավորման, ուժերի համախմբման, միասնական, ինտեգրացված գործողությունների ծրագրի մշակումն է հաջողության անվերապահ գրավականը: Այս պատմական միտման օրենսդրական արտահայտությունը եղավ Համաշխարհային Հայկական Կոնգրեսի ստեղծումը՝ խնդիր ունենալով բարձրացնել ափխարհով մեկ սփռված հայերի ազգային ինքնակազմակերպման եւ ինքնագիտակցության մակարդակը, համախմբել ափխարհի հայության գիտական, տնտեսական, ֆինանսական եւ քաղաքական ներուժը՝ հանուն համահայկական խնդիրների արդյունավետ լուծման, որոնց քվին, անկասկած, պատկանում է Հայոց ցեղասպանության հիմնահարցը:

Հարգարժան տիկնայք եւ պարոնայք Հաշվի առնելով ներկայվող հարցի հույժ կարեւորությունը մեր ժողովրդի համար եւ ներկա լսարանի պրոֆեսիոնալ բարձր մակարդակն ու շահագրգռվածությունը խնդրո առարկա հարցի լուծման գործում, ձեր ներկայմանն է ներկայացվում «Ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում» հայեցակարգի ձեւավորման վերաբերյալ Համաշխարհային Հայկական Կոնգրեսի 2004-2009 թվականների ափխատանքային ծրագրի, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի վերաբերյալ համահայկական ծրագրի մշակման ուղղությամբ երաշխավորությունների եւ մի շարք այլ փաստաթղթերի նախագծերի փաթեթը:

Լիահույս ենք, որ դուք ձեր ելույթներով եւ հարցադրումներով կլրացնեք եւ առավել ամբողջական ու համակողմանի կդարձնեք պատկերացումները ներկայվող հարցի վերաբերյալ, եւ մեծապես կնպաստեք մեր ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող, ողբերգական այդ շրջանի պատմության վայրիվերումները ճիշտ հասկանալու, ըմբռնելու եւ գնահատելու, ինչպես նաեւ թուրք ու թուրքամետ պատմաբաններին եւ պետական ու քաղաքական գործիչներին արժանի հակահարված տալու համար:

Այլ կերպ ասած, մեր նվիրյալ նպատակներին հասնելու համար մեզ պարտավորվում է երկար ու դժվարին ճանապարհ: Թե ինչպես կանցնենք խոչընդոտներով լի այդ ճանապարհը, շատ բանով կախված կլինի այսօրվա մեկնարկից: Ուստի ելնելով այդ ամենից, ես բարի երթ եմ ցանկանում կոնֆերանսի բոլոր մասնակիցներին եւ նրանց, ովքեր հետագայում կլծվեն այդ հայրենանվեր գործընթացին:

Ամերիկացիները Իրաքում ծանակել են նաեւ օտարներին

Իրաքցի գերիների հանդեպ կիրառված կտանջանքների դեպքերից հետո հայտնի են դարձել Իրաքում կոալիցիոն ուժերի զինվորների դատապարտելի վարքագծի նոր օրինակներ: Մասնավորապես կանադացի 57-ամյա գործարար Հոսամ Շալթուն դատական հայց է ներկայացրել ամերիկացի զինվորների դեմ, որոնք Իրաքում խոշտանգել են իրեն: «Գլոբ ընդ մեյլ» թերթի տվյալներով, ապրիլի 30-ին ներկայացված հայցում Շալթուն պնդում է, թե Իրաքի պատերազմի հենց սկզբում Քեմպ Բուկա ճամբարում ազելափակվելով՝ ինքը խոշտանգումների է ենթարկվել:

Լոսանջելեսաբնակ կանադացին նշում է, որ իրեն ծանակած ամերիկացի զինծառայողներից մեկն այն պահեստայիններ խմբում է, որոնք զորացրվեցին օրերս իրաքցի գերիների խոշտանգումների փաստերի հրապարակումից հետո: Հայցվորը պատմում է, որ իրավապաշտպանական կազմակերպություններից մեկի հանձնարարությամբ ինքը պատերազմից առաջ Իրաք էր մեկնել, որպեսզի այդ երկրի ղեկավարությանը համոզի հրաժարվել իշխանությունից: 2003 թ. ապրիլի 9-ին ծերբակալված Շալթուն ամբաստանվել է Սադդամ Հուսեյնին աջակցելու մեջ: Նրան ծեծել են, իսկ հյուրանոցի համարից գողացել 119 հազար դոլար: Շալթուն չի կարողանում տուն վերադառնալ, քանի որ ամերիկացիները չեն վերադարձնում նրա «կանաչ քարտը»: Հայցվորը պահանջում է 350 հազար դոլար փոխհատուցում:

Միաժամանակ Պենտագոնի պաշտոնական ներկայացուցիչ Ռիչարդ Բաուչերը հաստատում է, որ Հնդկաստանի կառավարությունը պաշտոնական հարցադրում է արել ՁԼՄ-ներում հայտնված այն տեղեկությունների կապակցությամբ, թե Իրաքում ամերիկացի զինվորները ծանակել են իրենց սպասարկած հնդիկ բանվորներին: Վաշինգտոնում Բաուչերը լրագրողներին ասել է, որ ԱՄՆ իշխանությունները «շատ լուրջ են վերաբերվում» այդ լուրերին, եւ իրենք կարելի կանեն փաստերը պարզելու համար:

Ամերիկացի դիվանագետները մասնավորապես պետք է պարզեն, թե ըստ պայմանագրերի ո՞ր կազմակերպություններում են ափխատել հնդիկ բանվորները, ինչո՞վ են զբաղվել եւ ի՞նչ պարագաներում են տեղի ունեցել խնդրո առարկա միջադեպերը: Բաուչերն այս կապակցությամբ ասել է, որ Իրաքում պայմանագրային ափխատանքների համար մեծ մասամբ պատասխանատու է Պենտագոնը:

Ավելի վաղ «Հինդուստան թայմս» թերթում հրապարակվել էին հարցազրույցներ Քեռալայի նահանգից Իրաք մեկնած հնդիկ բանվորների հետ, որոնք Մոսուլ քաղաքում պայմանագրային կարգով զբաղվել էին ամերիկյան զորքերի սպասարկման ափխատանքներով: Մահմեդական բանվորներից մեկը թերթի թղթակցին ասել է. «Ամերիկացիների խոհանոցներում մենք սարուկներ էինք եւ օրական հազիվ կարողանում էինք 2 ժամ քնել: Մեկ սխալը բավական էր լինում, որ մեզ մի քանի օր ծաղրուծանակի ենթարկեին»:

Ամերիկյան ռազմաճամբարի վրա իրաքցի ապստամբների հարձակումների ժամանակ ամերիկացի սպաները հնդիկ բանվորներին օգտագործել են որպես «կենդանի վահաններ»: Հնդիկ մահմեդականներից մեկը պատմել է, որ երբ ինքը խոհանոցում հրաժարվել է խոզի միսը դիպչել, իրեն ծեծել են հրացանների խրախոթերով:

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը փորձել է մեղմել Իրաքում ամերիկացի զինծառայողների հոգի վարագծի հետեւանքով ափխարհում առաջացած զայրույթի ալիքը: Արաբերեն հեռարձակվող երկու հեռուստաալիքներով նա հանդես է եկել հայտարարությամբ՝ դատապարտելով իրաքցի գերիների նկատմամբ ամերիկացիների գործադրած կտանջանքները: Ֆրանսպրեսը նշում է, որ երկու հեռուստաալիքներից մեկը Դուբայում գործող եւ մասամբ Սաուդյան Արաբիայից ֆինանսավորվող «Ալ Արաբիան» է, մյուսը՝ Վաշինգտոնից ոչ հեռու գտնվող «Ալ Հուռա» արբայական հեռուստաալիքը, որը ֆինանսավորվում է Կոնգրեսի փողերով եւ ստեղծված է որպես քաղաքական «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության ամերիկամետ այլընտրանք:

«Իրաքցիները պետք է հասկանան, որ ես նողկալի եմ համարում այդ արարքները», ասել է Բուշը, ավելացնելով, որ հանցավորները կպատժվեն: «Այն , ինչ տեղի ունեցավ, իմ ճանաչած Ամերիկան չէ, որն ընդունակ է կարեկցանքի, որի մարդիկ հավատում են ազատությանը, եւ որտեղ քանիսներ են գնահատում մարդու կյանքը», ընդգծել է նախագահը, հավատիացնելով, թե Իրաք ուղարկված զինվորների մեծ մասը «լավ քաղաքացիներ» են, որոնց նպատակն է «ազատություն բերել եւ օգնել» իրաքցիներին:

Միաժամանակ Բուշը խոստովանել է, որ ժողովրդավարությունն ինքնին հեռու է կատարյալ լինելուց, ուստի անելիք դեռ շատ կա:

Իրաքցիք դժգոհ են մնացել Բուշի խոսքերից: Նրանք ակնկալում էին, որ նախագահը ներողություն կխնդրի կտանջանքների համար:

Պ. Ք.

Բուշը Կոնգրեսից եւս 25 միլրդ է խնդրում Իրաքի ռազմարշավի համար

ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը երեկ Կոնգրեսից հավելյալ 25 միլրդ դոլար է խնդրել Իրաքում առաջիկա ռազմական գործողությունները ֆինանսավորելու համար: Հայտարարության մեջ Բուշն ընդգծում է, որ ա-

ռաջիկա ֆինանսական տարում այդ գումարն անհրաժեշտ է ամերիկացի զինվորների բոլոր կարիքները հոգալու եւ «հակահաբեկչական պատերազմի գլխավոր ճակատներում» ամերիկացիների հաղթանակն ապահովելու համար:

Ֆրանսպրեսը ընդգծում է, որ նախագահի նոր խնդրանքն անսպասելի էր եւ ամերիկացի դեմոկրատները գնահատում են որպես Իրաքի հարցում Ջորջ Բուշի վարչակազմի «ստիպվածության» վկայություն:

Ենթադրվում է այդ 25 միլիարդի մի մասը հատկացնել Աֆղանստանում խաղաղարար գործողությունների շարունակմանը: Տվյալ գումարը պետք է ավելացվի հոկտեմբերի 1-ին սկսվող 2005 թ. ֆինանսական տարվա բյուջեին: Փետրվարին Սպիտակ տան ներկայացրած 2005 թ. ֆինանսական տարվա բյուջեն կազմում է 2400 միլրդ դոլար եւ ընթացիկ տարում Իրաքի վերակառուցման եւ ռազմական գործողությունների համար նախատեսված 87 միլիարդից դուրս նոր ծախսեր չի պարունակում:

Ջորջ Բուշի խոսքերով, վերջին զարգացումները եւ Իրաքում ամերիկյան զորքերի հարաճուն պահանջմունքներն անհրաժեշտ են դարձնում ֆինանսավորման անընդհատությունը: Նախագահն ասել է, որ ռազմական գործողությունների ֆինանսավորման հարցի առթիվ ինքն արդեն զրուցել է պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդի հետ:

«Ազատության աշտարակի» հիմնարկեքը՝ հուլիսի 4-ին

2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից Նյու Յորքում ավերված «Համաշխարհային առեւտրի կենտրոնի» զույգ երկնաքերների տեղում կառուցվելու է «Ազատության աշտարակ» անունը կրող երկնաքեր, որի հիմնադրման արարողությունը տեղի կունենա ԱՄՆ-ի անկախության օրը՝ հուլիսի 4-ին: Այդ մասին CNN հեռուստաընկերության թղթակցին հայտնել է Նյու Յորքի նահանգապետ Ջորջ Պատակին:

«Ազատության աշտարակը» կունենա 541 մետր կամ 1776 ոտնաչափ բարձրություն (1776 թվականին է սկսվել ԱՄՆ-ի անկախության պատերազմը): Աշտարակը 33 մետրով բարձր կլինի Թայվանում կառուցված աշխարհի ամենաբարձր՝ «Թայբեյ-101» երկնաքերից:

«Ազատության աշտարակի հարկաբաժինների հիմնական մասը (70 հարկ) կզբաղեցնեն գրասենյակները: 71-72-րդ հարկերում կգործեն ռեստորաններ, 73-րդում՝ դիտահարթակ: Վերեւում՝ 330 մետր բարձրության վրա, կկառուցվի հողմատուրբինների մի ամբողջ հատված, որոնք 20 տոկոսով կապահովեն շենքի էլեկտրաէներգիայի կարիքները: Երկնաքերի տանիքի վրա կտեղադրվի հեռուստատեսային անտենա:

Նախագծի հեղինակը գերմանացի ծարտարապետ Դանիել Լիբսկինդն է: 2003 թ. փետրվարին նա հաղթեց Նյու Յորքի վարչակազմի հայտարարած՝ նախկին «Համաշխարհային առեւտրի կենտրոնի» տարածքի կառուցապատման միջազգային մրցույթում:

Դասախոսություն ղարաբաղյան շարժման մասին

Կանադայում գործող «Զորյան» ինստիտուտից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ ապրիլի 21-ին ինստիտուտի եւ հայկական ուսումնասիրությունների ու հետազոտությունների ազգային ասոցիացիայի համատեղ հովանավորությամբ Քեմբրիջում (Մասաչուսեթս) «Ցեղասպանությունը եւ հայ ազգային ինքնության փոփոխությունները ղարաբաղյան շարժման օրերին» թեմայով դասախոսություն է կարդացել Հայաստանի ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, դոկտ. Հարություն Մարությանը: «Ղարաբաղյան շարժման օրերին Հայաստանում պարզված ոլլակատների եւ լոզունգների մանրակրկիտ ուսումնասիրությունների հիման վրա զեկուցողը ցույց է տվել, որ մարդկանց մտքերում Սումգայիթում եւ Բաքվում այդ օրերին կատարվող իրադարձությունները նույնանում էին 1915 թ. հայերի ցեղասպանության հետ: Նա նաեւ շեշտել է ազգային ինքնության եւ հոգեբանության վերափոխման գործոնը, որը զոհից պահանջատեր էր դարձրել մարդկանց, եւ որը բերեց անկախության ձեռքբերմանը:

Դոկտ. Մարությանը մի շարք գրքերի ու հոդվածների հեղինակ է: Ներկայումս նա Ֆուլբրայթի կրթաթոշակով Մ. Նահանգներում է դասախոսելու համար Ռայս, Բարկլի, Կալիֆորնիա եւ այլ համալսարաններում:

Մ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Եղեռնի օրը հիշատակել են միասնաբար

Ամերիկայի հայկական համագումարից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ համագումարի, ՀԲԸՄ-ի Հարավային Կալիֆորնիայի մասնաճյուղի եւ Հայ եկեղեցու Արեւմտյան թեմի միացյալ պատվիրակությունը, Սակրամենտոյում միանալով Կալիֆորնիայի պետական ասամբլեայի անդամներին, նշել է ապրիլյան եղեռնի 89-րդ տարելիցը:

«Ուրախ եմ, որ միասնական ձայնով ենք հանդես գալիս այսօր Սակրամենտոյում», ասել է Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը: Իսկ հայկական համագումարի արեւմտյան գրասենյակի նախագահ Ռիչարդ Մուշեղյանը գոհունակություն է հայտնել, որ համագումարի կոչին արձագանքել են պետական օրենսդիր մարմինները, որոնք տարիներ շարունակ հաստատակամորեն պաշտպանել են Հայոց ցեղասպանության ճանաչման եւ հայ համայնքին առնչվող հրատապ հարցեր: Պաշտոնական արարողություններից հետո տեղի ունեցած հավաքույթի ընթացքում խոսք են առել Կալիֆորնիայի պետական ասամբլեայի մեծամասնական խմբի առաջնորդ Դարիո Ֆրոմերը (դեմոկրատ Գլենդեյլից), ներկայացուցիչներ Գրեգ Աղազարյանը (հանրապետական Սթոքթոնից), Քերոլ Լյուն (դեմոկրատ Փասադենայից), Ջոն Լոնգվիլը (դեմոկրատ Սան Բեռնարդինոյից) եւ Մարկ Ուայլենդը (հանրապետական Դել Մարից): Բոլորն էլ պաշտպանել են ասամբլեայի հաստատ ընդունած «ATR-73» բանաձեւը՝ ներկայացված Ջոզեֆ Սիմիթյանի կողմից (դեմոկրատ Պալո-Ալտոյից), որը ապրիլի 24-ը նշանակում է 1915-23 թթ. ցեղասպանությանը զոհ դարձած անմեղ հայերի հիշատակի օր:

Հ. Ծ.

ԱԶԳ

Մշակույթ

«Հայ Սփյուռք հանրագիտարանի» շնորհանդեսում

Մեկ ամիս առաջ «Ազգ» օրաթերթն ընդարձակ տեղեկություն էր հաղորդել Հայկական հանրագիտարանի խմբագրության շուրջ տասնամյա աշխատանքների վերջին արդյունքի՝ «Հայ Սփյուռք հանրագիտարանի» հրատարակման մասին: Իր տեսակի մեջ եզակի այս հրատարակության (տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը) մեջ առաջին անգամ փորձ է արվել ստեղծելու համաթարափակ բնույթի հանրագիտարան աշխարհի 70 երկրների հայ համայնքների մասին: Հրատարակության անհրաժեշտությունը հատկապես այս օրերին ակնհայտ է, երբ հայության համար կենսականորեն հատուկացած խնդիր է Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդումը, իսկ համագործակցության արդյունավորման համար նախ եւ առաջ ճանաչելի է պետք դարձնել հայ սփյուռքը, որին, անկասկած, կոչված է վերոհիշյալ հրատարակությունը (չնայած սակավաթանակ՝ 3.000 օրինակ տպագրությանը):

«Հայ Սփյուռք հանրագիտարանի» շնորհանդեսը պատշաճ մակարդակով կազմակերպվեց երեկ՝ խմբագրության շենքում: Գիրքը ներկայացրեց հրատարակության պատասխանատու խմբագիր Արամ Սարգսյանը. «Առաջին անգամ պատրաստվել է մի հրատարակություն, որն ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է 70 երկրների հայ համայնքներից յուրաքանչյուրի կենսագրությունը տեղեկություններ հաղորդելով համայնքի կազմավորման շրջանից, առաջին ներգաղթողներից մինչեւ մերօրյա ազգային քաղաքական եւ մշակութային գործիչները: Պատմական ակնարկներին հաջորդում են առանձին ենթաբաժիններով ներկայացված եկեղեցի, հասարակական-քաղաքական կյանք, մշակույթ, մամուլ, տպագրություն, այսինքն՝ ազգային կյանքի բոլոր ոլորտները: Ընթերցողը սպառիչ տեղեկություն է ստանում տվյալ համայնքի պատմության եւ այսօրվա գործունեության մասին»:

Հանրագիտարանի հրատարակության եւ նշանակության մասին կարծիքներ հնչեցրին ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, գրահրատարակչության վարչության պետ Էդվարդ Միլիտոնյանը, մշակույթի փոխնախարար Գագիկ Գյուրջյանը: Փոխնախարարը «Հայ Սփյուռքը» որակելով իբրեւ կլասիկ նախադեմ, հույս հայտնեց հետագայում նախարարության աջակցությամբ ստեղծել նմանատիպ հանրագիտարաններ, ինչպես ասենք հնագիտական հանրագիտարան, որը կկարեւորվի ոչ միայն Հայաստանի, այլեւ տարածաշրջանի համար:

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանն այս օրերին նման հրատարակությունների իրագործումն այնպիսի դժվարին գործ համարեց, որին չի կարելի մենակ թողնել: Չնայած մասնավոր անհատների եւ կազմակերպությունների, մասնակիորեն եւ պետության ֆինանսական աջակցությանը, այդուհանդերձ, նման կոթողային հրատարակությունները պահանջում են առավել լուրջ, պետական վերաբերմունք: (Այստեղ նշենք, թե որքան ֆինանսներ են վատնվում ժամանցային եւ օրվա կյանք ունեցող միջոցառում-գրքերի վրա: Այն դեպքում, երբ այսօր մշակութային նման սուղ պայմաններում գործում են լուրջ ծրագրեր իրականացնող հաստատություններ եւ մեր ժամանակը վավերացվելու է հենց նրանց ծիգերում: Զանազանել է պետք պարզապես անցողիկն անանց արժեքներից):

Խորհրդային բազմամյա փորձով Հովհ. Այվազյանը հիշեցրեց, որ ժամանակին հանրագիտարանային իրողությունը նկատվել է (եւ օգտագործվել) իբրեւ գաղափարախոսության տարածման միջոց՝ կատարելով նույնիսկ պետական ամբիոնի դեր, որի վկայությունը «Հայկական Սովետական հանրագիտարան» 13 հատորյա հրատարակությունն էր, որին հաջորդեց «Հայկական համառոտ հանրագիտարանի» քառահատորյակը: Անկախությունից հետո անդրադարձ է արվել թեմատիկ հանրագիտարաններին («Բժշկական հանրամատչելի հանրագիտարան», «Քրիստոնյա Հայաստան», «Հայ սփյուռք», պատրաստվում են «Ղարաբաղյան պատերազմ», «Կենսագրական հանրագիտարան» «Մենք» պայմանական խորագրով եւ «Հայաստանի բնաբխարհ» հանրագիտարանները): Պրն Այվազյանը խնդիր դրեց նոր ժամանակների պահանջներին համապատասխան ստեղծել անկախ Հայաստանի նոր հանրագիտարան՝ ելնելով ազգային գաղափարախոսության հիմնարար սկզբունքներից: Այս գաղափարն իբրեւ առաջնահերթություն, պետք է ընկալվի ոչ թե առանձին անհատների կողմից, այլ կառավարական, պետական մակարդակներում: Նա հիշատակեց Ռուսաստանի օրինակը, որտեղ

Մեծ եղեռնի զոհերի հուշարձանը Աբեղեղում

գիտարանի խմբագրության՝ մշակույթի նախարարության պատկանելությունը, այն պետք է լինի Գիտությունների ազգային ակադեմիայի կազմում: Արդ՝ «Հայ Սփյուռքը» կարեւորվեց Հայաստան-սփյուռք կապերի համար, այսօրվա հայ-սփյուռքյան հարաբերությունները բնութագրելով որպես միակողմանի. «Չի կարելի սփյուռքից միայն ուզել: Առաջ, երբ որեւէ հայկական գաղութ հայրենիքից մարդ էր գնում, ո՞նց էին դիմավորում, հիմա չեն ուզում մեզ տեսնել»: Նա առաջարկեց մշակել Հայաստանը սփյուռքին ծրագիր, որովհետեւ «մենք նույնպես պարտք ունենք իրենց տալու»: Իսկ ինչ վերաբերում է պրն Իգիթյանի այն կանխակալ կարծիքին, թե հանրագիտարանում վրիպած կարող են լինել շատ գործիչների, մասնավորապես նշեց սփյուռքահայ նկարիչներ Էմիլ Գազազի եւ Խորխե Դեմիրճյանի անունները, ժխտվեց: Հենրիկ Իգիթյանն անհրաժեշտ համարեց հանրագիտարանի ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն տարբերակների հրատարակությունները. «Վերջին տարիներին մենք մեզ համար ենք միայն աշխատում, իսկ աղբեջանցիները՝ աշխարհի»:

«Հայ Սփյուռք հանրագիտարանի» առաջին արձագանքները հիմնականում գովասանք-դրվատանքի բնույթով արդեն ստացվել են Սիրիայից, Կանադայից, Լիբանանից, Եգիպտոսից: Անշուշտ, կան նաեւ դիտողություններ, սակայն հրատարակության պատասխանատուները մտահոգված չեն այս կամ այն կուսակցության կամ կազմակերպության ամբիցիաները բավարարելով, փոխարենը կարեւորելով համայնքների մասին տեղեկությունները, տվյալները մանրամասնելու, ինչպես նաեւ հանրագիտարանն այլ լեզուներով փոխադրելու հանգամանքը: Այս պարագայում հատկապես պետական հովանավորությունը դառնում է պարտադիր:

ՄԵԼԻՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Կիեւի մոնոփառատոնից վերադարձել են մրցանակներով

ԵՐԵՎԱՆ, 6 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ապրիլի 21-26-ը Կիեւում կայացած «Վիդլուցյա» խորագրով մոնոներկայացումների միջազգային 5-րդ փառատոնից Երեւանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի դերասան Արամ Հովհաննիսյանն ու մնջախաղի թատրոնի դերասան Հայկ Զորիկյանը վերադարձել են մրցանակներով. Ա. Հովհաննիսյանի «Ռոսինանդ» մոնոներկայացումը մրցանակակիր է ճանաչվել «Լավագույն ժանրային սինթեզ» անվանակարգում, իսկ Հայկ Զորիկյանի «Պահպանենք միմյանց, մարդիկ»-ը՝ «Լավագույն դերասանական դերբություն» անվանակարգում: Այս մասին ասաց «Արմոնտ» միջազգային թատերական փառատոնի տնօրեն, Թատրոնի միջազգային ինստիտուտի Հայաստանի ազգային կենտրոնի նախագահ Հակոբ Ղազանչյանը:

Միջազգային այդ ստուգատեսին, որին մասնակցել են 15 երկրներից ժամանած դերասաններ, եւ որի մրցութային հանձնաժողովի կազմում են եղել Եվրոպայի ամենահայտնի բեմադրիչ Անջեյ Յուրովսկին (Լեհաստան), անվանի թատերագետներ Լիտվայից եւ Ուկրաինայից՝ Թատրոնի միջազգային ինստիտուտի Ռուսաստանի ազգային կենտրոնի նախագահ, Մոնոփառատոների միջազգային ասոցիացիայի պրեզիդենտ Վալերի Խազանովի նախագահությամբ, Հ. Զորիկյանն ու Ա.Հովհաննիսյանը ստացել են նաեւ նոր հրավերներ՝ մասնակցելու Ռիգայում, Մինսկում եւ Լեհաստանում կայանալիք միջազգային մոնոփառատոներին:

Խոսելով փառատոնի մեծ համբավի եւ միջազգային ճանաչման, այնտեղ հայ դերասանների աննախադեպ հաջողությունների մասին, Հ. Ղազանչյանը նշեց, որ այսուհետեւ իրենք աշխատելու են զարգացնել թատրոնի այս տեսակը, քանի որ այն դերասանին ինքնադրսեւորվելու առավել լայն հնարավորություն է ընձեռում, նաեւ, ինչու չէ, միջազգային ասպարեզ դուրս գալու համար: Նա նաեւ հատուկ շնորհակալություն հայտնեց Ուկրաինայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Խաչատրյանին՝ փառատոնին մասնակցելու հարցում աջակցելու համար:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

«Հայաստանի պատմական բառարան»

Հեղինակ՝ Ռուբեն Պող Ադալյան

Հայկական ազգային ինստիտուտից ստացված հաղորդագրությունն ընթերցողների ուշադրությանն է հանձնում անցյալ դեկտեմբերին լույս ընծայված Ռուբեն Պող Ադալյանի «Պատմական բառարան Հայաստանի» հատորի մասին «Միջինարեւելյան ուսումնասիրությունների ասոցիացիայի տեղեկագրում» տպագրված Պոլենդի պետական համալսարանի վաստակաշատ դասախոսներից Լեդիս Քրիստոֆի գրախոսականը:

Հինգ հարյուր հիսուն էջանոց հատորը բացվում է երկու քարտեզներով, մեկը՝ պատմական, մյուսը՝ ժամանակակից: Այնուհետեւ 37 էջերում տրվում է նախաքրիստոնեական շրջանից մինչեւ մեր օրերն ընկած Հայաստանի ժամանակագրական պատմությունը, որից հետո միայն սկսում է բուն բառարանն իր ամենաարբեր բաժիններով՝ «Ընդհանուր ակնարկ», «Հայոց ցեղասպանություն», «Մշակույթ», «Սփյուռք», «Կրոն եւ եկեղեցի», «Վերադարձների հիշողություններ», «Քաղաքականություն», «Տնտեսություն» եւ այլն:

«Ընդհանուր առմամբ հատորը մեծաթես հաջողված է: Այն մեզ ընդարձակ եւ արժանահավաս սոցիալ-պատմական տեղեկություն է տալիս քաղաքականապես դեռեւս ոչ ամբողջովին կայուն ներկա Հայաստանի մասին, որը վերջերս է միայն անկախություն ձեռք բերել երկար դարեր Պարսկաստանի, Օսմանյան կայսրության եւ Ռուսաստանի լծից տանջվելուց հետո», գրված է գրախոսականում, որը նաեւ հորդորում է գրադարաններին, քոլեջներին եւ ընդհանրապես անգլիախոս հասարակությանը՝ անպայման ձեռք բերել այդ բառարանը:

Հ. Ճ.

Իրանահայությունը պահանջում է հայ հանրությանը հարիր ֆիլմեր եւ հաղորդումներ

Անժխտելի է թերեւս, որ աշխարհասփյուռ հայությունը հայրենիքից տեղեկություններ ստանալու, հայկական մշակույթին առնչվելու, ինքնաճանաչման խնդիրներում մեծաթես պակաս է ՀՀ հանրային հեռուստատեսությանը: «Անցյալում սփյուռքը լսում էր «երեւանն է խոսում» ռադիոն՝ եթերային ամեն կարգի խախտումներով: Այն ավելի շատ հայրենասիրություն, հայկական մշակույթ եւ հայրենագիտություն էր բերում սփյուռք, քան այս հեռուստատեսության շատ ծրագրեր»: Այս փաստարկով էլ իրանաբնակ գրող, թարգմանիչ Խաչիկ Խաչերն «Ազգ» օրաթերթի միջոցով դիմել է Հանրային հեռուստատեսության ղեկավարներին, որպեսզի վերջիններս ցուցադրվող հաղորդումների եւ ֆիլմերի ավելի խիստ ընտրություն կատարեն: Նամակագիրն առաջին հերթին մատնանշում է. «Հարավային Ամերիկայի հանրային տներում եւ երրորդ կարգի պոռնկանոցներում պատրաստված «Տանգոյի սիրահարները» հեռուստաերիալը», որը «ոչ մի առնչություն չունի հայկականության հետ: Պարզապես չենք հասկանում, թե հարգարժան տնօրենությունը ինչո՞ւ է հայ ժողովրդի դառը դատած սենքերն ու դոլարները տրամադրում նման սնորացուցիչ պոռնոգրաֆիայի տարածման ու ցրման համար»: Այնուհետեւ նամակագիրն իրանահայերի անունից մտահոգություն է հայտնում, որ գուցե հեռուստատեսության տնօրենությունը ժամանակ էլ չի ունեցել նախապես ֆիլմը դիտելու: «Ի՞նչ է մնում անել Թեհրանում, Բեյրութում կամ Փարիզում նստած հայ ընտանիքի պատասխանատուի համար, որը լիովին վստահում էր ՀՀ հանրային հեռուստատեսությանը: Այս քարոզչությունը վստահաբար իր ավերիչ դերն ունի Հայաստանի դպրոցների ու բուհերի բարոյական կյանքում»: Նամակագիրը չի էլ կասկածում, որ ասվածը առանց իր նամակի էլ հասկանալի է եւ հեռուստատեսության ղեկավարներին, հասարակությանը, առավել եւս, Մայր աթոռին: Սակայն նրա համար անհասկանալի է առկա լռությունը: Հենց դրանից ելնելով էլ ողջ իրանահայության անունից նամակագիրը պահանջում է անմիջապես դադարեցնել թե «Տանգոյի սիրահարները» հեռուստաերիալի եւ թե նմանատիպ ֆիլմերի հեռարձակումը Հանրային հեռուստատեսությամբ: Նա խորհուրդ է տալիս. «Հայաստանի Հանրապետության դժվար աշխատած բյուջեն ավելի լավ, բարոյական, կրոնական ու ազգային սովորություններին հարիր ճամփաներին տրամադրել»:

Ն. Պ.

Նվիրաբերություն

ԵՐԵՎԱՆ, 6 ՄԱՅԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի ազգային գրադարանի տնօրինությունն այսօր իր հարկի տակ առաջին անգամ հյուրընկալեց ՀՀ-ում Գերմանիայի հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Հանս-Վոլֆ Բարթելսին: Վերջինս գրադարանին նվիրեց 20 անուն գերմաներեն գիտահանրամատչելի գրականություն, որը տրամադրել էր Գերմանիայի Գյոթեի անվան ինստիտուտը:

Հանդիպման ընթացքում Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը մասնավորապես ասաց, որ գրադարանն այսօր արտերկրում լույս տեսնող հայկական գրքերի ու տպագրությունների մասին անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու, նաեւ այդ գրականության օրինակներով հայաստանի գրադարանների ֆոնդերը համալրելու խնդիր ունի: Նա դեսպանին խնդրեց ավելի մեծ տեղեկատվություն տրամադրել Գերմանիայում տպագրվող հայկական գրքերի եւ մյուս հրատարակությունների մասին:

Դեսպանը եւ Դ. Սարգսյանը փոխադարձ համաձայնության եկան Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ հատկապես գրադարանային ոլորտի համագործակցությունն էլ ավելի սերտացնելու եւ ամրապնդելու ուղղությամբ: Նրանք կանացնել:

ԾԱՂՐԱՆԿԱՐՉԻ ԱՉՔԵՐՈՎ



Մարզական

Մորյենտեսը զրկեց «Չելսիին» եզրափակիչի ուղեգրից

Չեմպիոնների գավաթը կվիճարկեն «Պորտոն» ու «Մոնակոն»

Ֆրանսիական «Մոնակոյի» հարձակվող Ֆեռնանդո Մորյենտեսն ի չիք դարձրեց անգլիական «Չելսիի» երկրպագուների եւ խաղացողների հույսերը՝ թիմին տեսնելու չեմպիոնների լիգայի եզրափակիչում: Կիսաեզրափակիչ պատասխան խաղում «Չելսիին» չհաջողվեց ռեւանշի հասնել առաջին խաղում կրած պարտության դիմաց (1-3) բավարարվելով ոչ-ոքի արդյունքով (2-2): Թեեւ առաջին խաղակեսը հաջող եր անգլիացիների համար, որոնք խաղը շահում էին իրենց ձեռնտու 2-0 հաշվով:

«Չելսիի» մեկնարկային կազմում բացակայում էին որակազրկված Մարսել Դեսային եւ Կլոդ Մակելելեն, ինչպես նաեւ վնասվածք ստացած Դամյեն Դաֆը: Փոխարենը խաղադաշտ էին վերադարձել Գալասն ու Կուդիչինին: «Չելսին» առաջին իսկ րոպեներից դիմեց վճռական գործողությունների՝ ձգտելով որքան հնարավոր է շուտ վերացնել գնդակների տարբերությունը: Հաշիվը բացելու հիանալի հնարավորությունը ձեռից բաց թողեց Զիմի Հասելբայնկը, որը մեն-մենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, չկարողացավ գրավել դարպասը: Իսկ ահա, 22-րդ րոպեին «Չելսիի» դանիացի լեգեոներ Յեսպեր Գրոնկյաերը խփեց ընթացիկ խաղարկության թերեւս ամենագեղեցիկ գոլը տուգանային հրապարակի մասույցներից հուժկու հարվածով գնդակը մխրճելով դարպասի վերին անկյունը:

Բաց թողած գոլից հետո «Մոնակոն» զգալիորեն ակտիվացավ, սակայն շուտով երկրորդ գնդակն ընդունեց սեփական դարպասը: «Չելսիի» ձեռնարկած եռաթայլ կոմբինացիան դիպուկ հարվածով եզրափակեց Լեմպարդը: Թվում եր, թե թիմերն ընդմիջման կգնան 2-0 հաշվի ժամանակ, սակայն ավելացված ժամանակում «Մոնակոն» կրճատեց հաշվի տարբերությունը: Մորյենտեսի դարպասապահի դիմաց, հավասարեցրեց հաշիվը խփելով չեմպիոնների լիգայի մրցաշարում իր 9-րդ գնդակը: Այսպիսով, մայիսի 26-ին գերմանական Գելզենկիրհեն քաղաքում չեմպիոնների գավաթը կվիճարկեն պորտուգալական «Պորտոն» ու ֆրանսիական «Մոնակոն»:

Հետաքրքրական է թիմերի մարզիչների կարծիքը հանդիպման մասին:

Կլաուդիո Ռանյերի («Չելսի»)- Առաջին խաղակեսի արդյունքը զարմանալի է: Մենք տիրում էինք նախաձեռնությանը, հաղթում էինք մեզ ձեռնտու հաշվով, սակայն վերջին րոպեին գոլ բաց թողեցինք: Խաղը կարող եր ավարտվել 6-2 կամ 6-3 հաշվով մեր օգտին: Մենք շատ ջանքեր թափեցինք, սակայն արդյունքը մեր օգտին չեր:

Դիդյե Դեշամ («Մոնակո»)- Եթե առաջին խաղակեսն ավարտվեր «Չելսիի» 2-0 հաղթանակով, ապա մեզ համար շատ դժվար կլիներ 2-րդ խաղակեսում: Մեր թիմը սիրում է հարձակվել: Դա շատ կարեւոր է, հաշվի առնելով այն, որ թիմում խաղում է Մորյենտեսի նման հարձակվող: Նա երկար տարիներ հանդես է եկել «Ռեալում», եւ այսօր իմ թիմի լավագույն ֆուտբոլիստն է: Նա իրեն հիանալի դրսեւորեց օրինակ ծառայելով երիտասարդների համար:

Թայսոնը ռինգ կվերադառնա հուլիսին

Ինչպես երեւում է, ծանր քաշային պրոֆեսիոնալ բոքսամարտիկ Մայք Թայսոնը վերջնականապես որոշել է մեկամյա ընդմիջումից հետո ռինգ վերադառնալու կոնկրետ օրը: Հուլիսի 31-ին նա նախատեսում է մենամարտել իռլանդացի Քեւին Մակբրայթի հետ: Վերջինս պրոֆեսիոնալ բոքսամարտում բարձր վարկանիշ չունի: Թայսոնը ծրագրել է մի քանի մենամարտեր անցկացնել ոչ այնքան ուժեղ եւ հայտնի բոքսամարտիկների հետ, որպեսզի մինչեւ տարեվերջ լավ մարզավիճակ ձեռք բերի ու պատրաստ լինի մրցակցել համաշխարհային դասակարգման ցուցակի լավագույն տասնյակում տեղ գրաղեցնող ամերիկացի Ջո Մեսիի հետ, որը վերջերս հաղթել եր աշխարհի նախկին չեմպիոն, ղազախստանցի Վասիլի Ժիրովին: Թայսոնին այդ մենամարտին նախապատրաստում է Ֆրեդի Ռոուչը, որի գլխավորությամբ «երկաթյա Մայքը» հաղթել եր նախորդ մենամարտում: Կլիֆորդ Էյթենին ծնկի բերելու համար Թայսոնից ընդամենը 49 վրկ եր պահանջվել: Ռոուչը Թայսոնի հետ մարզումները կսկսի մեկ ամսից, իսկ մինչ այդ Մայքը միայնակ կմարզվի Արիզոնայում: Ռոուչի համոզմամբ, Թայսոնն ընդունակ է հաղթել ծանր քաշային կարգում աշխարհի ներկայիս չորս չեմպիոններից (ուկրաինացի Վիտալի Կլիչկո, ամերիկացիներ Կրիս Բերդ, Ջոն Ռուիս եւ Լեյմոն Բրյուստեր) յուրաքանչյուրին: Դրա համար Թայսոնը պետք է խիստ կարգապահ լինի եւ մարզումների շնորհիվ լավ մարզավիճակում գտնվի:

Իսկ առայժմ նա պետք է հաղթահարի իռլանդացի «հսկայի» դիմադրությունը: Քեւին Մակբրայթը 198 սմ հասակ ունի, իսկ քաշը 120 կգ է: Թայսոնի կողմնակիցները համոզված են, որ նա հեշտ հաղթանակ կտոնի: Իր գործունեության ընթացքում 31-ամյա իռլանդացին միայն երկու անգամ է լուրջ մրցակիցների հետ հանդիպել եւ երկու դեպքում էլ պարտվել է: 1997 թ. նա զիջել է գերմանացի Ավսել Շուլցին, իսկ 2002 թ. ամերիկացի Դեւերիլ Ուիլյամսոնին: Ընդհանուր առմամբ Մակբրայթը տոնել է 31 հաղթանակ (26-ը նոկաուտով), 4 մենամարտում պարտվել է, մեկն ավարտել է ոչ-ոքի: Առայժմ մենամարտի անցկացման ճշգրիտ վայրը դեռեւս հայտնի չէ, սակայն պարզ է, որ այն կկայանա ԱՄՆ-ում:

Բեքհեմն աշխարհի ամենահարուստ ֆուտբոլիստն է

«Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի անցկացրած հետազոտության արդյունքներով Մադրիդի «Ռեալի» կիսապաշտպան Դեւիդ Բեքհեմը 2003 թ. ստացած եկամուտներով աշխարհի ամենահարուստ ֆուտբոլիստն է: Անցյալ տարի նրա ընդհանուր եկամուտը կազմել է 22,4 մլն եվրո: Երկրորդ տեղում նրա բրազիլացի խաղընկեր Ռոնալդոն է՝ 16,5 մլն եվրո, երրորդում Զինեդին Զիդանն է՝ 14 մլն եվրո: Հարկ է նշել, որ Մադրիդի «Ռեալի» եռյակի աշխատավարձն ամսական 530 հազար եվրո է, իսկ տարեկան պարգեւավճարը կազմում է 100 հազար եվրո: Բնականաբար, Բեքհեմն իր խաղընկերներից առաջ է անցել այլ եկամուտների հաշվին: Այսպես, միայն գովազդից նրա տարեկան եկամուտը կազմել է 11,4 մլն եվրո, 3 մլն եվրո Բեքհեմն ստացել է իր «My Side» գրքի հրատարակումից: Եվս 1,5 մլն նա աշխատել է անցյալ տարվա ամռանն Ասիայով կատարած մրցաշրջագայությունից:

Ռոնալդոյի կողմնակի եկամուտները կազմել են 10 մլն եվրո, իսկ Զիդանինը՝ 7,4 մլն եվրո: Աշխարհի ամենահարուստ ֆուտբոլիստների ցանկում տեղ են գրավել նաեւ Քրիստիան Վիերին (11,1 մլն եվրո), Ալեսանդրո Դել Պիեռոն (10,1 մլն եվրո), Ռոնալդինյոն (10 մլն), Ռաուլը (9,3 մլն), Մայքլ Օուենը (9,1 մլն), Օլիվեր Կանը (8,8 մլն) եւ Լուիս Ֆիգուն (8,5 մլն): Ինչպես երեւում է ցուցակից, ամենահարուստ ֆուտբոլիստներից 5-ը Մադրիդի «Ռեալից» են:

Վերջերս շատ է խոսվում Դեւիդ Բեքհեմի Մադրիդի «Ռեալից» հեռանալու հնարավորության մասին: Անգլիայի հավաքականի ավագը հայտարարել է, որ պատրաստ է վերադառնալ «Մանչեսթր յունայթեդ», եթե գլխավոր մարզիչ Ալեխ Ֆերգյուսոնը հեռանա թիմից: Ի դեպ, վերջինս անցյալ տարվա արդյունքներով ամենահարուստ մարզիչն է: Նրա ընդհանուր եկամուտը կազմել է 5,8 մլն ֆունտ ստեռլինգ: Երկրորդ տեղում Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Սվեն Գորան Էրիկսոնն է՝ 3,7 մլն: Հաջորդ տեղերում են «Ռոմայի» մարզիչ Ֆաբիո Կապելոն (2,8 մլն ֆունտ ստեռլինգ) եւ «Արսենալի» գլխավոր մարզիչ Արսեն Վենգերը (2,3 մլն):

ՇԱԽՄԱՏ

Կատարովը կգլխավորի Հայաստանի հավաքականը

Ինչպես հայտնի է, ՖԻՖԱ-ն 2004 թ. հայտարարել է աշխարհի 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանի տարի: Այդ առթիվ նախատեսվող միջոցառումներից մեկն էլ հունիսին Մոսկվայում շախմատի Հայաստանի հավաքականի եւ աշխարհի հավաքականի միջեւ մրցամարտի անցկացումն է: Այն նվիրվելու է Տիգրան Պետրոսյանի ծննդյան 75-ամյա հոբելյանին: Հետաքրքրական է, որ Հայաստանի ուժեղագույն շախմատիստների հետ միեւնույն թիմում հանդես է գալու աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովը: Նա կգլխավորի Հայաստանի հավաքականը՝ հանդես գալով առաջին խաղատախտակին: ՀՀ հավաքական է հրավիրվել նաեւ հունգարացի գրոսմայստեր Պետեր Լեկոն, որն ինչպես հայտնի է հայ գրոսմայստեր Արշակ Պետրոսյանի փեսան է: Իսկ աշխարհի հավաքականը կգլխավորի հնդիկ գրոսմայստեր, ՖԻՖԱ-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Վիշվանաթան Անանդը: Նա հրաժարվել է Տրիպոլիում կայանալիք շախմատի աշխարհի առաջնության մասնակցությունից՝ նախընտրելով մոսկովյան մրցաշարը:

Պաղենը վերջնականապես հեռանում է ֆուտբոլից

Ֆրանսիացի հանրահայտ ֆուտբոլիստ ժան-Պիեռ Պաղենը վերջնականապես որոշել է հրաժեշտ տալ ֆուտբոլին: 2001 թ. նա ավարտեց ելույթները պրոֆեսիոնալ ֆուտբոլում, սակայն սկսեց հանդես գալ սիրողական լիգայում: Նրա շնորհիվ «Կաղ Ֆերե» թիմը 3 տարվա ընթացքում սիրողական 3-րդ դիվիզիոնից տեղափոխվեց առաջին դիվիզիոն: Հերթական հաջողությանը թիմը հասավ օրերս՝ վճռորոշ խաղում 4-3 հաշվով հաղթելով «Սեն Էթիյոնին»:

Երեք մրցաշրջանի ընթացքում 40-ամյա ֆուտբոլիստն իր հաշվին մոտ 140 գոլ է գրանցել: Պաղենն ընտրել եր «Կաղ Ֆերե» թիմը, քանի որ ակումբի նախագահ ժան-Կլոդ Պիշեն նրա լավագույն ընկերներից եր:

17 մլն դոլար Կավենագիի համար

Մոսկվայի ԲԿՄՄ ֆուտբոլային ակումբի նախագահ Եվգենի Գիները 17 մլն դոլար է առաջարկել արգենտինյան «Ռիվեր փլեյթ» թիմի եւ Արգենտինայի երիտասարդական հավաքականի 20-ամյա հարձակվող Ֆեռնանդո Կավենագիի համար: Բանակցությունների համար Մոսկվա է մեկնել ֆուտբոլիստի գործակալը: «Ռիվեր փլեյթի» նախագահ Խոսե Մարիա Ագիլարան այդ առնչությամբ նշել է, որ բացի ԲԿՄՄ-ից, իր թիմի ֆուտբոլիստով հետաքրքրվում են նաեւ Իսպանիայում, Անգլիայում եւ Իտալիայում: Ամեն դեպքում, Կավենագին թիմում կմնա մինչեւ հուլիս: Առայժմ նա հարկավոր է ակումբին երկրի առաջնության եւ Լիբերտադորեսի գավաթի կարեւորագույն հանդիպումներում:

Չնայած երիտասարդ տարիքին, Կավենագին Հարավային Ամերիկայի առավել տաղանդավոր ու հեռանկարային ֆուտբոլիստներից է: Դեկտեմբերին Արաբական Միացյալ Էմիրություններում կայացած ֆուտբոլի աշխարհի պատանեկան առաջնությունում Կավենագին չորս գնդակով Արգենտինայի հավաքականի լավագույն ռմբարկուն եր: Դեռեւս անցյալ տարի նրանով հետաքրքրվում էին եվրոպական ուժեղագույն ակումբները՝ «Վալենսիան», «Ռոման» եւ «Յուվենտուսը»: Նա հայտնվել եր նաեւ ռուսաստանյան ակումբների՝ «Սպարտակի» եւ «Լոկոմոտիվի» ուշադրության կենտրոնում:

Եթե բանակցությունները հաջողությամբ պսակվեն եւ Կավենագին տեղափոխվի ԲԿՄՄ, ապա դա կարագացնի խորվաթ Իվիցա Օլիչի վաճառքի հարցը: Անցյալ տարի այս ֆուտբոլիստին գնելու համար ԲԿՄՄ-ն 5 մլն դոլար եր ծախսել, սակայն ընթացիկ մրցաշրջանում թիմի պորտուգալացի մարզիչ Արթուր ժորժեն համառորեն չի ընդգրկում մեկնարկային կազմում: Առաջնության եւ թիմին խորվաթական լրատվամիջոցները հաղորդագրություն տպագրեցին, որ մոտ 6 մլն եվրոյով Օլիչին ցանկանում է գնել Մոսկվայի «Սպարտակը»: Սակայն վերջին պահին գործարքը չկայացավ, քանի որ բրազիլական «Պալմեյրասը» հրաժարվեց 6,5 մլն եվրոյով ԲԿՄՄ-ին տրամադրել իր լավագույն հարձակվող Վագներ Լովեին, որը պետք է փոխարիներ Օլիչին:

ՖԻՖԱ-ն կատարեց իր ընտրությունը

ՖԻՖԱ-ն գործնականում որոշել է, թե ո՞ր երկրում է անցկացվելու ֆուտբոլի աշխարհի 2010 թ. առաջնությունը: Ուսումնասիրելով հավակնորդ 5 երկրների ներկայացրած պաշտոնական առաջարկները, ՖԻՖԱ-ն գերազանց գնահատական է տվել Հարավաֆրիկյան Հանրապետության ներկայացրած առաջարկին, մինչդեռ Մարոկկոյի եւ Եգիպտոսի ներկայացրած փաստաթղթերն արժանացել են շատ լավ գնահատականի: Թունիսի եւ Լիբիայի՝ առաջնությունը կազմակերպելու հնարավորությունները գնահատվել են ոչ բավարար:

Սանտինին պատրաստ է գլխավորելու «Տոտենհեմը»

Ֆուտբոլի Ֆրանսիայի հավաքականի գլխավոր մարզիչ ժակ Սանտինին պատրաստ է գլխավորելու անգլիական «Տոտենհեմը»: Նա դժգոհ է այն բանից, որ մինչեւ օրս Ֆրանսիայի ֆուտբոլի ֆեդերացիան իրեն նոր պայմանագիր չի առաջարկել: Հավաքականում աշխատելու Սանտինիի ժամկետն ավարտվում է եվրոպայի առաջնությունից հետո: Սանտինին նշել է, որ եթե «Տոտենհեմի» ղեկավարությունը բանակցի իր հետ, ապա ինքը կուսումնասիրի նրանց առաջարկը: Սանտինիին հետաքրքրական է պրեմիեր-լիգայում իր ուժերը փորձելը: «Տոտենհեմի» գլխավոր մարզչի պաշտոնին հավակնում են նաեւ Կլաուդիո Ռանյերին, Ջովանի Տրապատոնին, Մարտին Օ'Նիլը եւ Խոսե Մաուրինյոն:

Հասելբայնկը կհեռանա «Չելսիից»

«Չելսիի» լավագույն ռմբարկու Զիմի Հասելբայնկը դժգոհ է իր ներկա վիճակից, քանի որ մշտապես տեղ չի գրաղեցնում թիմի հիմնական կազմում: Նա հայտարարել է, որ մրցաշրջանի ավարտից հետո կհեռանա «Չելսիից»:

31-ամյա հոլանդացի ֆուտբոլիստով հետաքրքրվում է «Սելթիկը»: Թիմի գլխավոր մարզիչ Մարտին Օ'Նիլը բարձր է գնահատում Հասելբայնկին, գտնելով, որ վերջինս կարող է հաջողությամբ փոխարինել շոտլանդացիների առաջատար հենրիկ Լարսոնին: Շվեդ հարձակվողը եւս մրցաշրջանի ավարտից հետո հրաժեշտ է տալու հարազատ ակումբին: Ամենայն հավանականությամբ նա կտեղափոխվի հունական «Օլիմպիակոս»:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ի ՀՈՒՇ

Հայրենիքի նվիրյալը

Գնդ. Առնո Տատինցյան

Ընդունված է ասել, որ հայրենիքի պաշտպանության պատրաստականությունը մասնագիտություն է: Գնդապետ Առնո Արշակի Տատինցյանն իր ամբողջ գիտակցված կյանքը կապել է զինված ուժերի հետ: Ծնվել է 1939 թ. մայիսի 1-ին Գորիսում, 1956 թ. ավարտել է Ա. Բակունցի անվան միջնակարգ դպրոցը, երազել սովորել եւ դառնալ սպա: 1958 թ. զորակոչվել է ԽՍՀՄ զինված ուժեր, 1959 թ. ավարտել է հրետանու գնդի սերժանտական դպրոցը, 1962 թ.՝ Թբիլիսիի հրետանու ուսումնարանը, 1978 թ.՝ Սանկտ Պետերբուրգի (Լենինգրադ) հրետանու ակադեմիան:

Ա. Տատինցյանի զինվորական ծառայությունն անցել է նախկին Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում, Թուրքմենիայում, Ուզբեկստանում, 1988 թ.՝ Հայաստանում: Նա անցել է հրամանատարների բոլոր պաշտոնները՝ դասակից մինչեւ հրետանու գունդ, դասավանդել է «մարտավարություն» առարկան բարձրագույն զինվորական ուսումնարանում, նշանակվել բարձր պաշտոնների՝ դիվիզիայի հրթիռահրետանային զորքերի պետ, բանակի հրթիռահրետանային զորքերի շտաբի պետ:

ՀՀ անկախության հռչակումից հետո պարապմունքներ է անցկացրել ազատամարտիկների հետ: 1991 թ. մայիսի 6-ին նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր ստեղծված պաշտպանության կոմիտեի օպերատիվ վարչության գլխավոր մասնագետ, վարչության պետ, 1992 թ. փետրվարից՝ ՀՀ պաշտպանության նախարարության հրթիռահրետանային զորքերի շտաբի պետ, վարչության պետի տեղակալ:

Մեծ գործունեություն է ծավալել զինված ուժերի ստեղծման, հրետանային զորքերի ու ստորաբաժանումների դիրքավորման եւ մարտունակության բարձրացման գործում: 1992 թ. օգոստոսի 26-ին նա զոհվել է ծառայողական պարտականությունները կատարելիս Սիսիանի շրջանում: 2001 թ. հետմահու պարգեւատրվել է ՀՀ «Արիության» մեդալով, ունի 8 այլ մեդալներ, բազմաթիվ պատվոգրեր եւ արժեքավոր նվերներ լավագույն ծառայության համար:

Առնո Տատինցյանի հիշատակը հավերժ կմնա նրա զինակից ընկերների սրտերում:

ՌՈՒԲԵՆ ԲԱԽՇՅԱՆ
Պահեստի գնդապետ, Ա. Տատինցյանի մարտական ընկեր,
«Ասպար» զորացրված սպաների ՀԿ նախագահ

Ցավակցություն

Ցավակցություն ենք հայտնում Հայաստանի Հանրապետությունում Լատվիայի Հանրապետության պատվո հյուպատոս՝ ՎԱՀԱՆ ԱԹՅԱՆԻ ընտանիքին եւ հարազատներին իր վաղաժամ մահվան կապակցությամբ:

Լատվիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն

Վ. Աթյանի հոգեհանգիստը տեղի կունենա մայիսի 6-ին, ժ. 18:00-ին: Հասցեն Երեւան, Իսահակյան փողոց 22, բն. 3:

Հուղարկավորությունը մայիսի 7-ին, ժ. 15-ին, նույն տեղից:

Հայաստանի ամերիկյան համալսարանը

մրցութային կարգով **աշխատանքի է հրավիրում՝**

Գրասենյակի կոորդինատորի

Թեկնածուն պետք է ունենա բարձրագույն կրթություն, լավ տիրապետի հայերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներին ու համակարգչային հմտություններին, ինչպես նաեւ ունենա առնվազն մեկ տարվա համապատասխան աշխատանքային փորձ:

Պահանջվող փաստաթղթերն են՝ կրթության վկայական եւ ինքնակենսագրություն (անգլերենով/resume):

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ ս.թ. մայիսի 10-ը, ժ. 17:45:

Դիմել՝ ՀԱՀ, 50ա սենյակ, Մարշալ Բաղրամյան 40 հասցեով:

Աբաշիձե գերդաստանի մայրամուտը

Սկիզբը էջ 1

Աբաշիձեի հրաժարականի մասին պաշտոնապես հայտարարեց Սակակավիլին: «Վրացիներ, Ասլանը փախավ, Աջարիան ազատ է», ասաց նա, ապա Բաթումում կրկնեց խոստումը, որ չի հետաքրքրի Աբաշիձեին: Մինչ այդ Սակակավիլու կողմնակիցները հասցրել էին ներխուժել Աբաշիձեի արդեն անպաշտպան նստավայր, կողոպտել եւ ցուցարարների առաջ այրել «Առյուծի» աթոռը:

Սակակավիլին բաթումցիներին խոստացավ, որ Աջարիայով սկսվում է Վրաստանի վերամիավորումը եւ հաջորդն Աբխազիայի ու Հարավային Օսիայի հերթն է: «Համոզված եմ, որ շատ շուտով մենք ձեզ հետ կգնանք Աբխազիա», ասաց Սակակավիլին:

Հետեւեց Աբխազիայի պատասխանը: «Աբխազիան Վրաստանը չէ, աբխազների մտածելակերպը բոլորովին այլ է», ասել է արտգործնախարար Սերգեյ Շամբան: Պաշտպանության նախարար Վյաչեսլավ Էբբան նկատել է, որ եթե Սակակավիլին ուզում է տեսնել Սուխումը, ապա աբխազական իշխանությունները կարող են ընդունել, բայց եթե արտավանքը կրի զանգվածային բնույթ, ապա դա ընկալվելու է իբրեւ պատերազմ: Էբբան ասել է, որ այդ դեպքում, ի տարբերություն Աջարիայի, «օդ չենք կրակելու, այլ՝ նպատակակետին»:

Այսօր, թվում է, Աբխազիայի հակամարտությունը կարգավորելու ժամանակը չի եկել: Վրացական իշխանությունները նախ «կարգուկանոն» պիտի հաստատեն Աջարիայում, այսինքն՝ Աբաշիձեի ընտանեկան կլանի պաշտոնները բաժանվեն Սակակավիլու կողմնակիցների միջեւ: Երեկվանից արդեն Աջարիայում հաստատվել է նախագահի ուղղակի կառավարում մինչեւ հունիս ամիսը, երբ կանցկացվեն նոր ընտրություններ: Ի դեպ, վրացական խորհրդարանը երեկ շատ կարգով հերթական անգամ սահմանադրության մեջ կատարեց փոփոխություն, այլապես Սակակավիլին լիազորություն չէր ունենա ուղղակի կառավարելու Աջարիան:

Սակակավիլին երեկ խոստացավ, որ Աջարիան չի կորցնի ինքնավարության կարգավիճակը: Հիշեցնենք, որ 1921 թ. կնքված Կարսի պայմանագրով Թուրքիան Աջարիան զիջեց խորհրդային Վրաստանին՝ պայմանով, որ Աջարիան պահպանի լայն ինքնավարություն Վրաստանի կազմում:

ՀՀ Կենտրոնական բանկը 7.05.2004 թ. ժ. 9.00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	554.56	549.00	560.10
EUR	1	եվրո	671.90	667.90	675.90
RUR	1	ռուս. ռուբլի	19.21	18.10	20.50

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2004 թվականի հունիս-հուլիս ամիսներին Վասպուրական հայրենակցական միությունը կազմակերպելու է 10-օրյա ուխտագնացություն Արեւմտյան Հայաստան հետեւյալ երթուղով

Կարս-Անի-Էրզրում-Սարիղամիշ-Մուշ-Բիթլիս-Վան-Բայազետ-Իգդիր

Վանում գտնվելու 4 օրերի ընթացքում կկազմակերպվի այցելություն Աղթամար եւ Կտուց կղզիներ, ինչպես նաեւ Արտամետ, Վանի բերդ, Վանի թանգարան:

10-օրյա ուխտագնացությունը կիրականացվի եվրոպական չափանիշներին համապատասխանող ավտոբուսով: Ուղեւորության արժեքի մեջ ներառված են հյուրանոցի, սննդի եւ տեխնիկական այլ հարցերի հետ կապված ծախսերը:

Դիմել մինչեւ 2004-ի մայիսի 15-ը:

Մանրամասնությունների համար ամեն ուրբաթ, ժամը 13.00-14.00 դիմել Վասպուրական հայրենակցական միություն:

Հասցեն՝ Հանրապետության (նախկինում Ալավերդյան) փողոց թիվ 32 (Հուշարձանների պահպանության ընկերության շենքում):

Հեռախոս՝ **52-95-83**:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

HUBERT HUMPHREY FELLOWSHIP PROGRAM

The Public Affairs Section of the Embassy of the United States of America is pleased to announce the annual competition for the **Hubert Humphrey Fellowship** in the United States for the 2005-2006 academic year.

The .Humphrey Fellowship Program is a one year, full scholarship program offered to mid -career professionals who have a commintment to public service, are in leadership positions and at a point in their careers to fully benefit from a self-defined program of independent study at a leading U.S. university. The program awards a certificate from the U.S. Government and *it is not designed to deliver an advanced degree*. The Hubert H. Humphrey Fellowship Program brings accomplished professionals from developing countries and transition states to the United States at a midpoint in their careers for a year of study and related professional experiences. Fellowships are granted competitively to professional candidates with a commitment to public service in either the public or private sector.

BASIC REQUIREMENTS FOR THE SCHOLARSHIP

* Armenian citizenship
* A Bachelor's degree
* Five years of substantial professional experience
* Demonstrated leadership qualities and a record of public service
* Fluency in English

ELIGIBLE FIELDS ARE:

- Natural resources and environmental management
- Public policy analysis and public administration
- Economic development
- Agricultural development/ agricultural economics
- Finance and banking
- Human resource management/personnel
- Urban and regional planning
- Public health policy and management
- Technology policy and management
- Educational planning
- Law and human rights
- Communications /journalism

*Drug abuse epidemiology/prevention /education/ treatment (NIDA)

*The field of drug abuse includes drug abuse with an emphasis on drug abuse epidemiology, education, prevention and treatment. NIDA applicants should hold an earned doctoral degree in medicine, health, biomedical, behavioral, or social science, candidates holding master's degree and who have substantial professional experience and/or research background will also be considered. For NIDA applicants a short additional application is required and may be obtained from the U.S. Embassy.

APPLICATION PROCEDURE AND COMPETITION SCHEDULE

Interested applicants must apply to the U.S. Embassy. After national selection, the finalist will take the TOEFL exam. Applicants with TOEFL scores lower than 525 paper-based and 195 computer-based will be technically ineligible. The final nominations are reviewed in the United States by independent review committees and the J. William Fulbright Foreign Scholarship Board. Awards are announced by March each year for Fellowships beginning in August/September.

- Applications may be obtained from the Public Affairs Office of the U.S. Embassy in Yerevan, or downloaded from the Embassy web site: http://www.usa.am. 'All materials must be typed or computer-generated. The application includes a preliminary test of English language ability, which will be conducted only for those who will be invited for an interview after the first selection round by the U.S. Embassy.

Completed applications must be submitted to Anahit Khachatryan, Cultural Affair' Assistant, Public Affairs Office, U.S. Embassy, at 52-98-25 or 52-70-01, ext: 4477, who may also be contacted for more information about the fellowship.

FREQUENTLY ASKED QUESTIONS

- How strict are the deadlines? Deadlines are firm.
- If I was not successful in previous competitions, can I apply again? Yes.
- What are the selection criteria? The following factors are considered: leadership ability, commitment to public service, candidate's objectives and program plan/personal statement, professional and personal qualifications, need for the program and language proficiency. Preference will be given to candidates with little or no previous experience in the United States.
- Can I complete my Masters Degree while on the program? No. The Humphrey Fellowship is a non-degree program.
- What are the basic benefits? The Humphrey Fellowship provides international travel, tuition and university fees, accident/sickness insurance, monthly maintenance allowance and funding for books and professional activities. The Humphrey Program does not provide financial support for accompanying dependents.
- Can family members accompany? The Humphrey award does not include an additional allowance for dependents. The Fellow may request permission for dependents to join him/her in the US, but must show proof of adequate personal funds to cover living expenses and dependent's health insurance.
- Do I have to arrange university affiliation in the United States? No. There is no provision for fellows to request placement at any particular university. The universities are selected on a competitive basis. Each university is chosen based on institutional resources and the level of support and guidance'it offers to the participants.
- Should I mail references together with the application package? Referrers should fax directly to the Public Affairs Office of the U.S. Embassy, or enclose the letters in separate sealed envelopes in the application package.
- When should I submit diploma transcripts/translations? Since this is costly, we require it only for the finalists. Please make sure you will be able to submit it when you are selected as a finalist. If you are unable to submit it, you will be considered as ineligible.

Deadline for submission: June 11, 2004.

ԳՈՎԱԳԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 6. 05. 2004 Գինը՝ 100 դրամ